



Téléphone C. 03-97

Rédaction et Administration :

74 Rue Papère - MARSEILLE

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԺԴ. Տարի - ՆՈՅԵՄԲԵՐ 1938 14^{me} Année - Novembre 1938

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ — Եղբայր	Յ. Ն. Ղ.
ՀՈԳ. ԿԵԱՆՔ — Հաշտութեան ծառայութիւնը	Թրգմ. Ն. Մ.
» » Երեսունըօթերորդ Սաղմոսը	I. Marshall Morsey D. D.
ՇՈՂԵՐ ԵԻՋՇԱՂԵՐ ԿԵՆԱՑ ԱԾՈՒՆԵՐԸ — Նոր Կտակա- րանի միջոցաւ մահէն ազատուած — Անձնասպանութիւնէ ազատուած — Աւելի մեծ Թագաւորի մը գիտականը — Լուսին մը ըլլալ ուղեց	Հասարեց' Վեր. Ժ. Կ. Պ.
ԵՐՋԱՆԻԿ ՅՈՅՍԸ — Քրիստոսի եկեղեցին եւ անոր ապագան	Վեր. Պ. Ս. Ակիւլեան
Ս. ԳՐԱԿԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ — Ութը ուխտերը	Scofieldէն
ՇՆՈՐՀԱՅ ԾՈՎԷՆ — Տէրոջը շնորհքովը ես ալ	Երեմիա Երեմեան
ՋԱՆԱՋԱՆ ԼՈՒՐԵՐ	Զ. Բ. Պ. եւ Յ. Ն. Ղ.
ԵՐԳ — Նորաստիճանը Եւթաւայել Գեղ	Սամուէլ Պ.



ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսաթերթը թէեւ ֆրանսահայ Աւետարանական եկեղեցիներու պաշտօնաթերթն է, այսու ամենայնիւ, նպատակ ունի ծառայելու ամենուն, որոնք Յշմարտութիւնը կը փնտռեն եւ ծարար կըզգան Աստուծոյ խօսքին անխարդախ վկայութեան: Քանի որ Քրիստոս չեկաւ միայն կարգ մը անհատներու համար, այլ ամենուն, բնութիւն Յշմարիտ «Բան»ին ներկայացուցիչն ալ չճանչնար ո եւ է յարանուանութիւն մը, հասլա մէկ է անոնց հետ, որոնք Քրիստոսի մէջ իրեն կը միանան: ԲԱՆԲԵՐ կ'ուզէ ծառայել անոնց:

«ԲԱՆԲԵՐ» հոգեւոր ամսաթերթը կը հրատարակուի Մարտէյլի մէջ 16 էջերով (կողքէն զատ
անոր խմբագրական ժարմնին անդամներն են
Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍՅԱՆ, Վեր. Ժ. Կ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ, Վեր. Ա. Օ. ՓԱՓԱԶԱՆ, Վեր. Զ. Բ. ՊՈՒՏԱՔԵԱՆ
Բրոֆ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ, Պատ. Վ. ՍԱՀԱԿԵԱՆ, Պատ. Ի. ԱՐԲԱՀԱՄԵԱՆ, Պատ. Մ. ՎԷՔԻԼԵԱՆ

ԲԱՆԲԵՐի համար յօդուած կրնան գրել անոնք միայն, որոնք գիտեն վերստին ծնունդն ու հոգեւոր կեանքը եւ անոր մէջ ապրելու ամենօրեայ ուրախութիւնը կը վայելեն Քրիստոսով: Յօդուածադրքեր մինչեւ որ ամբողջութիւնով խմբագրութեան ձեռքը չհասնին, նկատի չեն առնուիր:

Յօդուածներ կարելի եղածին չափ ընթերցելի եւ մեկնով գրուած թուղթին մէկ կողմին վրայ միայն եւ ԿԱՐՃ ըլլալու են: Խմբագրութիւնը յօդուածները յապաւելու եւ սրբագրելու եւ օգտակար դարձնելու համար փոփոխութիւններ ընելու ինչպէս նաեւ զանոնք չհրատարակելու իրաւունքը իրեն կը վերապահէ, քանզի իրօք կուզան լաւ յօդուածներ որոնք երբեմն կրկնութիւն են առաջուրնէ հրատարակուած խորհուրդներու: Այսպիսիներ զանց կ'ընենք, ուրիշ յօդուածներու տեղ առլու համար:

ԲԱՆԲԵՐի բաժանորդագրութիւնը տարեկան է եւ կանխիկ բաժանորդագրութիւնը կ'սկսի ամէն տարի ցունուարին եւ կը վերջանայ Գեկտեմբերին:

— ԲԱԺՆԵԳԻՆՆ Է —
Ֆրանսա 25 Ֆրանք, Սուրիա 20 Ֆրանք
Արտասահման Տոլար 1. 25

Դ Ի Ի Ր Ո Ի Թ Ե Ա Ն Հ Ա Մ Ա Ր
ՀԵՏԵԻԵԱԼ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆԸ


Ամերիկայէն travelers check, թղթադրամ
եւ ամերիկեան նամակադրոշմ կրնայ ղրկուիլ:
Ուրիշ երկիրներէ \$ 1.25ի համարժէք ամէն տեսակ դրամ:
Յօդուածներ ղրկուելու են Պատ. ՎԱՀԱՆ ՍԱՀԱԿԵԱՆի
խկ թղթակցութիւններ եւ դրամական առաքումներ
Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍՅԱՆի անունով, երկուքն ալ
հետեւեալ հասցէով.—

Réd. «PANPÈRE» c/o Rev. H. N. GHAZAROSSIAN
7, Rue Papère
MARSEILLE (France)

Մանալով դրամական առաքումի տւթիւ հաճեցէք մանալին վրայ գրել
H. N. Ghazarossian, 7, rue Papère - Marseille (France) C. C. No. 182.53-Marseille

Արժնոցի՛ր դուն
որ կը քնանաս, եւ
կանգնէ՛ մեռելնե-
րէն, ու Քրիստոս
քեզի լոյս պիտի
տայ:
Եփես. Ե. 14

ԲԱՆԲԵՐ



Ուրեմն ա՛լ վախճանք, որ չըլլալ Թէ
Անոր հանգիստը մոռնելու խոստմունքէն որ մեզի մնացեր է,
ձեզմէ մէկը գրկուած գտնուի: Երբ. Գ. 1

Քանզի ալ աս-
կէ քիչ մը ատենէն
Ան որ գալու է՝
պիտի գայ ու պի-
տի չուշանայ:

Երբ. Ժ. 37

ԺԴ. ՏԱՐԻ

ՆՈՅՆՄԱՐԵՐ 1938

ԹԻԻ 11



Ի՞նչ են հաւատացեալները



Ե Ղ Բ Ա Յ Ր

Գնա՛ եղբայրներուս եւ ըսէ՛ անոնց,
ես կ'ելլեմ իմ Հօրս քով ու ձեր
Հօրը քով եւ իմ Աստուծոյս քով
եւ ձեր Աստուծոյն քով:

Յովհ. Ի 17

Այս անգամ նկատի պիտի առնենք վերջինը
այն անուանակոչումներուն, զոր Տէրը
կուտայ հաւատացեալներուն: Եթէ Տէրը կամի,
թերեւս ուրիշ անգամ պատահութիւն պիտի
ունենանք նկատի առնելու կարգ մը յորջորջում-
ներ, որոնք հաւատացելոց կ'ըլլան Ս. Հոգիին
կողմէ, առաքեալներու բերնով:

Եղբայր: Մէկու մը տրուած ամենափափուկ
արտայայտութիւնն է: Եղբայր կը կոչեն զիրար
անոնք որ այս աշխարհի վրայ նոյն ծնողաց
զաւակներն են, նոյն ծնողքէն յղացուած, կրուած,
մոլցուած, խնամուած անձեր: Նոյնասերմն և
ուրեմն նոյնատիպ են և ունին մօտ խնամութիւն
արեան, նկարագրի:

Յիսուս իր աշակերտները և անոնց հետ
մէկտեղ ամեն իրեն հաւատացողները եղբայր
կը կոչէ, ցոյց տալով անոնց և իր միջեւ եղած
ամենամօտ բնութենական յարաբերութեան
էութիւնը ինչպէս նաեւ ապացուցանելով անոնց
և իր միջեւ եղած հոգեւոր ազգականական
կապին անքակտելիութիւնը: Նա այս բառով
ի յայտ կը բերէ ու դեռ ցոյց կուտայ թէ կապ-
ուած է անոնց հետ ընդմիջտ և վերջապէս անով
հաստատուն հաւաստիքը կուտայ անոնց թէ
անոնց յարաբերութիւնն ալ նոյնն է Հօրը հան-
դէպ ինչպէս է իրենը: Զայս պիտի բացատրենք:

Սակայն կարեւոր է նկատի առնել կանխաւ
թէ ի՞նչ պարագայի տակ Յիսուս զանոնք եղբայր
կը կոչէ: Ամենուն պարզ է ան: Ինքը յարութե-
նէն յետոյ առաջին անգամն ըլլալով Ինքզինքը

կը յայտնէ Մարիամի, մինչ Մարիամ կարծես
շփոթած, իմա տրտմութեան քունէն յանկարծ
սթափած զինքը ճանչցածին պէս Անոր ոտքը
կ'ուղէ փաթթուիլ աղաղակելով «Ռաբբունի»:

Յիսուս կ'ըսէ, Ինծի մի դպչիր, վասնզի դեռ
Հօրս քով ելած չեմ: Այսինքն դեռ ժամանակ
պիտի ունենաս պատշաճ յարգանքն ու երկըր-
պագութիւնը ընելու Ինծի, այս չէ՛ ատոր յարմար
ժամանակը, այժմ պատգամ կը դնեմ բերանդ,
զոր կրնաս տանիլ ուրիշներուն. Գնա՛ եղբայրնե-
րուս եւ ըսէ՛, անոնց, ես կ'ելլեմ...: Ուրեմն
եղբայր բառը երեք ու կէս տարուան մէջ առաջին
անգամն ըլլալով կը գործածէ Յիսուս իր հաւա-
տացողներուն, այն ալ յարութենէն յետոյ և
յարութեան յարաբերութեամբ միայն: Հաճէ
ուշադրութեամբ կարդալ Մատթ. ԻԸ 9, 10, Հո.
Ը 29, Եբր. Բ 14, Սաղմ. ԻԲ 22: Ինչո՞ւ համար
Յիսուս յարութենէն յետոյ էր որ միայն գործա-
ծեց այս անունը: (*)

Պարզապէս այն պատճառաւ, որ Նա ատկէ
առաջ իր գործը տակաւին լիցուցած չէր: Պէտք
էր իրեն նախ չարչարուիլ, խաչը ելլել, պէտք
էր մեռնիլ, թաղուիլ, յարութիւն առնել, ամեն
բան կատարել, պէտք էր փրկութիւնը կատարել:

(*) Մեր Տէրը իրաւ ուրիշ առթիւ մըն ալ եղբայր
բառը կը գործածէ, տե՛ս Մատթ. ԺԲ. 45, 50, բայց
հոն տարբեր դրդապատճառ մը կար եւ զայն ալ գեռ
առնելու ենք գալիք յարութեան մեծ դէպքի յարաբե-
րութեամբ: Յիսուս եղբայր կը կոչէ զանոնք իրենց
գալիք դիրքին նկատմամբ:

Հիմա եղած են ասոնք. Քրիստոս իր երկնային նպատակին հասած է այս աշխարհի վրայ: Հիմա երկինք ու երկիր իրարու հետ հաշտուած են, Բ. Կոր. Ե 19:

Այս յարաբերութեամբ և յարութեան հետեւանքով նոր ստեղծագործութիւն մը սկսած է — Յարուցեալ Քրիստոսի ստեղծագործութիւնը, որուն անդրանիկը նոյնիսկ Ինքն է, ըլլալով շօշափելի պատկերը աներեւոյթ Աստուծոյ, Կող. Ա 13, 18: Հետեւաբար Յիսուս իր փրկագործութեան արարքով և յարութեամբը Աստուծոյ որդիութիւնը վաստկած է հաւատացեալներուն համար ալ և անոնց իշխանութիւն տուած է որպէս այն. անոնք Իր եղբայրներն են: Այս եղբայրութեան իշխանութեան մէջ Հկայ արեան, մարդու կամքի և մարմինի կամքի խնդիր, հապա եղբայրները Ս. Հոգիին միջոցաւ Աստուծոյ ծնած են, Յովհ. Ա 12: Ուրեմն ամեն մէկը որ ինքզինքը քրիստոնեայ կը սեպէ, պէտք է քննէ ինքզինքը թէ արդեօք ինքը Աստուծոյ ծնած է, քանզի այդ է միակ և միակ պայմանը Աստուծոյ որդիութեան և Քրիստոսի եղբայրութեան: Քրիստոսի եղբայր ըլլալով Անով Հօրը հետ մտերիմ հաղորդակցութեան մտած են հաւատացեալները ու մէկ են Իրեն հետ, այնպէս որ թէեւ իրենք Հպիտի տեսնեն Յիսուսը Իր փառաւորութեան անցնելէն յետոյ, բայց դարձեալ Անոր եղբայրներն են և Անոր ներկայութիւնը պիտի զգան իրենց մէջ այս աշխարհի վրայ, մինչեւ իրենց մեկնումը ասկէ և դէմ առ դէմ Անոր հետ միանալու:

Եղբայրներ նոյն բնութեամբ օժտուած կ'ըլլան, Յիսուսի եղբայրները նոյն Հոգիէն ծնած ըլլալով, Անոր պէս յաղթական ըլլալու ճամբուն մէջ են և կը ձգտին յաղթական կեանքն ապրելու նոյն զօրութեամբ որ Իրմով անոնց մէջ կը ներգործէ: Անոնք սրբութեան կեանքին մէջ կը թեւակոխեն և Քրիստոսի պատկերէն կը կերպարանափոխուին փառացի փառս: Քրիստոսի եղբայրները այս աշխարհի քաղաքացիներ չեն, այլ երկնաքաղաքացիներ, ինչպէս է իրենց մեծ եղբայրը: Պանդուխտներ են, որոնք իրենց երկնային հայրենիքի կարօտով կը հառաչեն, հոն է իրենց վերջին հանգրուանն ու հանգիստը: Առ այս անոնք բնականօրէն Քրիստոսի ապրած երկնային կեանքը կ'ապրին: Անոնք իրենց մեծ եղբոր պէս ուխտաւորներ են, որոնց համար աշխարհ և անոր ուրախութիւնն ու վայելքը վերջինը չէ, ընդհակառակը նոյնիսկ կարգը կը դասուի նեղութեան և տառապանքի: Անոնք


կը ձգտին աւելի փառաւոր կեանքի և ուրախութեան, որ իրենց պատրաստուած է և չեն զբաղիր աշխարհային գործերով և բռնուիր անոր ցանցէն:

Եղբայր նաեւ յարութեան մարմնով: Այս կէտին մէջ ալ հաւատացեալները բոլորովին Յիսուսի պէս պիտի ըլլան յարութեան կամ յափշտակութեան վայրկեանէն սկսեալ, որմէ յետոյ նաեւ որպէս եղբայր Անդրանիկին, պիտի ըլլան ժառանգներ Հօրը և Իրեն ժառանգակիցներ, նստելով Անոր աթոռին վրայ, ինչպէս որ Ան ալ Հօրը աթոռին վրայ կը նստի: Զարմանալի՜ յարաբերութիւն մըն է այս, զարմանալի կապակցութիւն մը, հաղորդակցութիւն մը, մէկութիւն մը ամեն բանի մէջ:

Այսու ամենայնիւ պիտանալու ենք թէ Անիկա նորէն Որդի կը մնայ և իր տեսակին մէջ միակը, քանզի Ինքն է Աստուծոյ բուն պատկէրը ու մենք Անոր պատկերովը միայն ստեղծուած ենք: Ու ճիշդ այս պատճառաւ է որ Նա կը մնայ նաեւ միշտ բարձր, անմատչելին (անհասանելին) քանզի Հայրը հաճեցաւ որ Աստուածութեան բոլոր լեցունութիւնը միայն Անոր մէջ բնակի Կող. Ա 20: Այս տարբերութիւնը Իր ծագումին մէջ է. զոր կը տեսնենք նոյնիսկ Յիսուսի հետեւեալ խօսքերուն մէջ, «Ես կ'ելլեմ Իմ Հօրս քով ու ձեր Հօրը քով և Իմ Աստուծոյս քով ու ձեր Աստուծոյս քով: Ուշադրութեան առ թէ չըսեր ձեր Հօրը և ձեր Աստուծոյն, հապա Իմ Հօրս և ձեր Հօր, եւայլն: Քանզի մենք Քրիստոսի պէս նոյն նշանակութեամբ Աստուծոյ որդիները չենք և չենք ալ կրնար ըլլալ: Ու Ինք կը մնայ Անդրանիկը բոլոր եղբայրներու մէջ, փառաւորեալը, պաշտելին: Անոր կ'երկրպագենք և պիտի երկրպագենք դարեր անվերջ, յաւիտեանս յաւիտենից: Ա՛հ, ի՛նչ փառք է Յիսուսի եղբայր ըլլալ: Անգլիոյ թագաւորին թագաւորական փառքը շուք մըն է միայն այդ եղբայրութեան փառքին քով:

Քրիստոսի եղբայր ըլլալը հաւատացեալին ամենաթանկագին սեփականութիւններէն մին է և իր մէջ մեծ իշխանութիւն ունի: Այս իշխանութիւնը արժանաւորապէս գործածենք:

Յ. Ն. Ղ.





ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆԸ

Եւոդիային կ'աղաչեմ ու Սիւնտիքին կ'աղաչեմ,
որ միեւնոյն խորհուրդը ունենան Տէրոջմով:

ՓԻԼ. Դ 2, 3

Գրեթէ կարելի չէ հասկնալ թէ ինչպէս տա-
րակարծիք ոգին բաժանում կը մտցնէր Փիլիպ-
պէի եկեղեցիին կիներուն մէջ: Փիլիպպէի եկե-
ղեցին աղօթաժողովի մը մէջ ծնած էր: Աստուա-
ծավախ կիներու խումբ մը առտու կանուխ կը
հաւաքուէր հոն գետեզերքը Բարձրեալին հետ
հաղորդակցելու: Անտարակոյս Եւոդիա եւ Սիւն-
տիք ալ անոնց խումբէն էին: Այսպիսի պայ-
մաններու տակ մարդիկ այնպիսի անքակտելի
կապով մը կը կապուէին իրարու, որ կարծես
սխալ հասկացողութիւն կամ օտարացում կարելի
չեն. սակայն յայտնի է թէ հոս իսկ օտարացում
տեղի ունեցած էր ու Առաքեալը իր շնորհալի
ազդեցութիւնը կը գործածէ զանոնք իրարու
հետ հաշտեցնելու:

Առաքեալը չի յիշեր թէ ինչ կէտերու մէջ
իրարմէ տարբեր խորհուրդ ունէին ու այս մասին
մեր երեւակայութիւնը գործածելը բարի նպա-
տակի մը չի ծառայեր: Մենք լաւ գիտենք թէ
երբ աստուածապաշտութեան կրակը իր գորու-
թիւնը կը կորսնցնէ, թունաւոր կասկածներ
կ'արթնան սիրտերու մէջ: Երբ մեր պատու-
հանները չենք բանար առ Աստուած՝ մեր հոգի-
ները կը փնասուին ապականած օգէն ու երբ
Աստուծոյ հետ կատարեալ հաղորդակցութեան
մէջ չենք գտնուիր, մարդոց հետ ունեցած մեր
յարաբերութիւնը կը խզուի:

Տէրոջը հետ մտերիմ յարաբերութեան մէջ
գտնուող հաւատացեալներ չեն կրնար իրարմէ
օտարանալ: Ուրեմն առանց այս Փիլիպպեցի
կիներուն կռիւին մանրամասնութիւնները
պրկատելու, կրնանք կատարեալ վստահութեամբ
ըսել թէ Եւոդիայի ու Սիւնտիքի Տէրոջը հետ
ունեցած կապը թուլցած էր: Հոգիներու թշնամին
ամէն բանէ աւելի անոր վրայ կը հսկէ, որ մեր
հոգեւոր կապերը թուլնան, քանզի երբ Երկնա-
յինը զանց կ'ընենք, երկնաւորը իր սրբութիւնը
կը կորսնցնէ: Զարմանալի է թէ ինչպէս ամենա-
փոքր աղտեղութեանց մէջ իսկ փնասակար
խոտեր կ'ածին: Նախանձի ու կասկածի տեղ

տալու համար շատ մարմնաւոր ըլլալու հարկ
չկայ: Ամենապզտիկ աղտեղութեանց մէջ իսկ
արմատներ կ'արձակուին: Երբ Տէրը անտես
կ'ընենք, տեղի կուտանք աղտեղութեանց, որոնց
մէջ ամէն կարգի նողկալի բոյսեր երեւան կու-
գան մեր կեանքերուն մէջ: Հոս կը տեսնենք թէ
ինչպէս Առաքեալը իր մատը կը դնէ օտարացման
գաղտնիքին վրայ: Կը յորդորէ որ անոնք կրկին
իրարու միանան «Տէրոջմով»: Միայն «Տէրոջմով»
կարելի է միացում յառաջ բերել: Ամէն ուրիշ
միջոց ժամանակաւոր ու անկատար արդիւնք
կ'ունենայ: Ծշմարիտ համերաշխութիւնը մի-
միայն «Տէրոջմով» կ'ըլլայ: Տէրոջը ներկայու-
թիւնը հրաշալիօրէն կը հալէ ու ի մի կը ձուլէ:
Սառը վերցնելու միակ ճշմարիտ միջոցը տա-
քութեան աստիճանին բարձրացումն է: Երբ
երկու հոգիներու միջեւ պաղուծիւն կայ, երբ
անոնց խօսակցութիւնն ու յարաբերութիւնը
սառի նման է, կարելի չէ սառը կոտրտելու աշ-
խատելով արգելքը վերցնել, ասոր միակ միջոցն
է զանոնք Տէրոջը ներկայութեան տանելով
տաքութեան աստիճանը բարձրացնել, քանզի
Անոր շնորհքը «մաշող կրակ» է:

Շնորհալի արտօնութիւն մըն է որ Եւոդիայի
ու Սիւնտիքի հաւատակիցները կրնան զանոնք
կրկին օրհնեալ միացման բերել: «Իրաւ քեզի
ալ կ'աղաչեմ՝ իմ հարազատ լծակիցս, դուն ալ
օգնական եղիր անոնց, որոնք իմ հետս աշխա-
տեցան Աւետարանին մէջ»: Խնդիր չէ թէ ով է
այս հարազատ լծակիցը, Տիմոթէոս, Շիղա՞,
Եպափրոդիտո՞ս թէ Առաքեալին կինը. արդիւ-
նաւոր կէտը այն է որ Առաքեալը մէկի մը
կ'աղաչէ որ իւր հոգեւոր ուժերը ի սպաս դնէ
եկեղեցիին այս երկու բաժնուած անդամները
միացնելու: Անոնց կռիւը անտես ընելու չէ:
Թուլատրելու չէ որ անոնց մէջ եղած տարբե-
րութիւնը զարհուրելի անդունդի մը վերածուի:
Թողելու չէ որ սխալ հասկացողութիւն մը ատե-
լութեան ու արհամարհանքի փոխուի: Երբ եկե-
ղեցիի մը մէջ երկու հոգի յիմարաբար իրարմէ
գժտին, եկեղեցիին սրբազան պարտականութիւնն
է զանոնք ուղղել, ոչ թէ լոկ այն երկու անդամ-
ներուն սիրոյն, այլ ամբողջ եկեղեցիին օգտին
համար: Բարոյական հիւանդութիւնները փո-
խանցիկ են: Անձնական տարբերութիւններէ
կրնան ընկերական բաժանումներ ծագիլ: «25^օ
գիտեր որ քիչ մը խմորը բոլոր զանգուածը կը
խմորէ»: Ամբողջ եկեղեցին մտածելու է այսպիսի
օտարացման մը պարագային:

Երբ մարմինին մէկ անդամը կը վիրաւորուի,

անիկա անմիջապէս իրեն օգնութեան կը կանչէ իր բոլոր միւս անդամները: Այսպէս կ'ընէ նաև Պօղոս Առաքեալ, «երբ Քրիստոսի մարմինին» եկեղեցիին մէջ պատուաւոր կը նշմարէ: Տեսէք, ի՞նչ ուժերու կը դիմէ: Ոչ թէ միայն իր ճշմարիտ լծակիցին կ'աղաչէ, այլ նաև «Կղեմեսին և իմ ուրիշ գործակիցներու»: Ամէնն ալ կը յորդորէ որ Եւոդիայի ու Սիւնտիքի միջեւ եղած օտարացումը վերցնելու օգնեն: Խիստ թելադրիչ խորհուրդ մըն է ասիկա: Անհամար դառն բաժանումներ յառաջ պիտի չգային, եթէ եկեղեցիներ աղօթքով ու յարատեւութեամբ Պօղոսի այս խորհուրդին հետեւած ըլլային: Փոքրիկ սխալ հասկացողութիւններ, որ մեծնալով մոլեռանդ յարանուանականութեանց ծնունդ տուած են, կրնային իրենց սկզբնաւորութեան մէջ բուժուիլ, եթէ եկեղեցին իր հաշտարար ուժերը հաւաքած ըլլար Տէրոջը առջեւ: Սակայն մենք թողուցինք որ զնդասեղի մը պատճառած վէրքը ապականելով՝ ամբողջ արիւնը թունաւորէ: Առաքեալին ցոյց տուած ծառայութիւնը ամենէն ազդեցիկն է: Եթէ մենք հաշտութեան դեսպաններ ենք, անշուշտ մեր պաշտօնը կը պահանջէ որ իրարմէ օտարացած անդամներ իրարու հետ հաշտեցնենք: Մեր օրհնեալ կոչումն է որ այս կիներուն օգնենք, որպէսզի նոյն խորհուրդը ունենան Տէրոջմով:

Հաւատացեալներու ամբողջ խումբը բաժին ունին այս գործին մէջ: Առաքեալը ամենայն փափականկատութեամբ կը յիշէ նաև բոլոր անոնք որ տեսանելի եկեղեցիին վարչութեան մէջ կարեւոր դիրքեր չէին զբաւեր: «Եւ իմ ուրիշ գործակիցներուս հետ, որոնց անունները կենաց գիրքին մէջ են»: Տէրը շատ մը աննշան զաւակներ ունի, որոնք խաղաղութիւն ընելու մէջ մեծ դեր կը կատարեն: Անոնց համեստ ներկայութիւնը, անոնց չափաւոր տաղանդները, անոնց ընտանեկան բարեպաշտութիւնը ու անշուք դիրքը՝ զանոնք կը նախապատրաստեն գոտուած հոգիներ կրկին համերաշխութեան բերելու: Փայլուն առաջնորդի մը նշանաւոր դիրքը թերեւս արգելք կ'ըլլայ այս հաշտարար ծառայութիւնը մատուցանելու, սակայն անձանօթ ու աննշան գործակից մը թերեւս աւելի դիւրութեամբ կրնայ դառնել այս ծառայութեան առաջնորդող գաղտնի դուռը:

Թարգմ. Ն. Մ.

ԵՐԵՍՈՒՆԸԹԵՐՈՐԻ ՍԱՂՄՈՍԸ

(I. Marshall Morsey D. D.)

Երեսունըթերորդ Սաղմոսին առաջին եօթը համարներուն մէջ կը գտնենք Աստուծոյ զաղտնիքը օրհնեալ կեանք մը ապրելու: Երբ Աստուած մարդկային մարմինը ստեղծեց, ամէն կերպով կատարեալ մեքենայ մը յառաջ բերաւ, անոր ամէն մէկ մասը ճիշդ իր տեղը ու այնպէս պատրաստուած, որ երբ բնականոն գործունէութեան մէջ է, իր բոլոր պէտքերը մանրամասնօրէն կը լեցնէ ու մարմնաւոր երջանկութեան պատճառ կ'ըլլայ: Նոյնը ճշմարիտ է նաև հոգեւոր կեանքին համար: Երբ հոգեւոր կեանքը կը հնազանդի այն օրէնքին զոր Աստուած զրած է հոգիին համար, մարդիկ հոգեւոր երջանկութեան կը տիրանան և ֆիզիքապէս ալ երջանիկ կը զգան: Թէ հոգեւոր և թէ ֆիզիքական կեանքը երջանիկ պահելու կարգ մը խիստ կարեւոր կանոններ կան այս եօթը համարներուն մէջ:

ՄԻ ՆԵՂԱՆԱՐ

Առաջին հրահանգն է՝ «Մի նեղանար», որ կրկնուած է նաև ութերորդ համարին մէջ: Զարեհուն համար նեղանալու կամ հոգ ընելու չենք, հոգ չէ թէ անոնք մեզի կամ ուրիշներու դէմ գործեն: Մեր հոգեւոր մեծ մասը յառաջ կուգայ մարդոց մեզի ու մեզ շրջապատողներու հասցնելիք չարիքին համար նեղանալէ: Անոնք կրնան խլել մեր տունը, մեր գործը, մեր բարի անունը կամ մեր քսակը: Աստուած կ'ըսէ որ մեր ուշադրութիւնը անոնց չի դարձնենք: «Ետ կեցէք մարդէն, որուն շունչը իր ոընգունքներուն մէջ է, վասնզի ի՞նչ բանի մէջ հաստատ կը համարուի ան»։ Ես. Բ 22: Քիչ մը օգ հեռացուր անկէ, կտրէ անոր շունչը, ու հողէ կոյտի մը կը վերածուի: «Անոնք խոտի պէս շուտով պիտի կորսուին ու կանանչ խոտի պէս պիտի չորնան»: Այն Աստուծոյ զաւակը, որուն փափաքն է որ Աստուծոյ խաղաղութիւնը իր սիրտն ու միտքը պահէ, սորվելու է չի նեղանալ:

ՅՈՒՍԱ

«Տէրոջը յուսա ու բարութիւն ըրէ, երկրին վրայ բնակէ ու ճշմարտութեան մէջ արածուէ»: Փոխանակ ուրիշներուն ըրածին համար նեղանալու, Տէրոջը վստահէ ու Անոր քու ձեռքիդ մէջ դրած բարիքն ըրէ: Միշտ ճշմարիտ է թէ «Երանի է այն ծառային, զոր իր Տէրը եկած ատենը այնպէս ըրած պիտի գտնէ»: Քու ամէն

պիտոյքներուդ համար Աստուծոյ յուսա ու գործիդ հտեւն եղիր: Աստուած քեզ երկրին վրայ պիտի բնակեցնէ ու կերակրէ: Անոր ճշմարտութիւնը քու կերակուրդ պիտի ըլլայ: Միտքդ բեր Աստուծոյ հաւատարմութիւնը ու վստահէ Անոր անվերջ խնամքին: «Ինք գրուցեց թէ բնաւ քեզ պիտի չխողում, ու բնաւ քեզ երեսէ պիտի չը ձգեմ»։ Եբր. ԺԳ 5:

ՈՒՐԱԽԱՅԻՐ

«Ու Տէրոջմով ուրախացիր, և Անիկա կուտայ քեզի քու սրտիդ խնդրուածքները»: Աստուած ոչ թէ միայն բնակարան ու կերակուր պիտի պատրաստէ քեզի համար հաւատարմաբար, այլ նաև պիտի տայ քու սրտիդ փափաքածները, այն բաները, որոնց անհրաժեշտ պէտք չունիս, եթէ Իրմով ուրախանաս: Այս է քաղցր յարաբերութիւն առատաձեռն հօր մը ու սիրող զաւակի մը միջեւ: Երբ զաւակ մը կ'ուրախանայ իր հօրմով ու զայն հաճեցնելով, հայրն ալ կ'ուրախանայ իր զաւակով ու զայն հաճեցնելով: Ինչ հրաշալի ու սիրելի և թանկագին բաներ կ'ընէ մեր երկնաւոր Հայրը մեզի համար երբ մեր սիրտը Իրմով կ'ուրախանայ: Մեր սրտին փափաքները ստանալու ամենէն մեծ գաղտնիքներէն մին է բոլոր սրտով Տէրը սիրել: Տէրոջմով ուրախացիր ու Անիկա քեզ պիտի ուրախացնէ քու սրտիդ փափաքները լեցնելով: Հրաշալի ուրախութիւն մը կը լեցնէ քու սիրտդ երբ կը տեսնես թէ ինչպէս երկնաւոր Հայրդ քու չարտայայտած բաղձանքներդ իսկ կը կատարէ: Որչափ աւելի խորունկ սիրով մը կը լեցուիս այսպէս սիրող հօր մը հանդէպ որ քու անձնական նախընտրութիւններդ նկատի կ'առնէ:

ՅԱՆՁՆԷ

«Տէրոջը յանձնէ քու ճամբադ, (տառապէս Տէրոջը վրայ գլորէ քու ճամբադ), ու Անոր յուսա, և Անիկա պիտի կատարէ»: Երբ քու խնդիրներդ Աստուծոյ կը յանձնես, Անիկա կը կատարէ: Երբ Յովսէփի պատմութիւնը կարդանք, յաճախ կը հանդիպինք «Եւ եղաւ որ» ոճին: Արդարեւ, երբ Տէրը քեզի վերաբերեալ խնդիրները Իր ձեռքը կ'առնէ, անոնք կը կատարուին: Աշխարհի վրայ չկայ ուժ մը որ կարենայ Զայն արգելել: Ամենակարողին ամբողջ ուժը քեզի հետ է զանոնք կատարելու: Կ'ըսուի թէ Աստուած Յովսէփին յաջողութիւն տուաւ: Յաջողի կը նշանակէ «անցընել»: Ինչպէս՞ գետէ մը անցընել: Աստուած Յովսէփը անցուց, զայն ան-

ցուց գուրէն, գերութենէն, բանտարկութենէն, սովի եօթը տարիներէն ու իր մահուանէն վերջն իսկ զայն անցուց Կարմիր ծովէն, քառասուն տարի անապատներէ ու Յորդանանէ մինչեւ որ Խոստացեալ երկրին մէջ թաղուեցաւ: Աստուած իրապէս անցուց Յովսէփը: Եթէ կատարելապէս ու անվերապահօրէն քու կեանքդ Անոր յանձնես, «Անիկա պիտի կատարէ»: Անտարակոյս Անիկա պիտի կատարէ: Կրկնէ այս խօսքը ու անոր համար ապրէ: Եզեկիէլ մարգարէն «անիւ անիւ մէջ» տեսաւ, բայց երբ աղաղակը բարձրացաւ, մէկ անիւ մըն էր: Բու կեանքիդ ու քեզի վերաբերեալ խնդիրներու համար ալ «անիւ անիւ մէջ» կրնան ըլլալ, բայց երբ Աստուած կը շարժի, մէկ անիւ երեւան կուգայ ու բոլորը կը գերազանցէ և ոչինչ կրնայ անոր առջեւ առնել: Յովսէփի պէս «Դուրս պիտի հանէ քու արդարութիւնդ լոյսի պէս, ու քու իրաւունքդ կէսօրուան պէս»: Աստուծմէ ծրագրուած ու Աստուծմէ կառավարուած կեանք մը ուղիղ ու յաջողակ կ'ըլլայ: «Աբրահամ Աստուծոյ հաւատաց և այն իրեն արդարութիւն սեպուեցաւ: Ամէն ով որ Աստուծոյ կը հաւատայ, արդար է ու իր խնդիրներուն կատարուելը պիտի ցուցնէ թէ ինք ուղիղ է:

ՀԱՆԳՁԷ

«Տէրոջը համբերէ», կամ ըստ անգլերէն թարգմանութեան՝ «Տէրոջը մէջ հանգչէ»: Ամէն ինչ Տէրոջը յանձնելէ վերջ Անոր մէջ հանգչէ: Հանդարտութեամբ Անոր մէջ հանգչելով զԱյն կը պատուես: Երբ քու խնդիրներդ Ամենակարող Աստուծոյն ձեռքին մէջն են, Անոր մէջ հանգչիլը իմաստութիւն է: Ուրիշ ինչ կրնաս ընել: Եթէ Ամենակարողը չկրնար, մեր խնդիրները կարգադրել, աշխարհի վրայ կա՞յ մէկը որ կարենայ: Անգոր մարդիկ կարող չեն անշուշտ: Ո՛րչափ հակամէտ ենք անհուն Աստուծոյն ներկայութենէն հուշաւոր մարդուն վազել օգնութիւն խնդրելու: Երբ մէկը քեզի հարցնէ թէ ի՞նչ կ'ընես քու խնդիրներդ, անոր կրնաս ըսել՝ «Բան մը չեմ ըներ, Ան որ բոլորովին կարող է, զանոնք կը կարգադրէ: Տէրոջը մէջ կը հանգչիմ»: Ինչպէս որ ովկէանոսը կտրող մեծ շոգենաւով ճամբորդող անհատ մը կրնայ հանգստաւէտ աթոռի մը վրայ հանգչիլ, մինչ մեծ մեքենաները ու հսկայ անիւները զայն մորկայոյդ աղիքներուն վրայէն կը տանին, նոյնպէս ալ դուն կրնաս հանգչիլ, պարզապէս հանգչիլ Տէրոջը մէջ: Շարունակ հնարքներ գործածեցիր, աճապարեցիր, հոս ու հոն վազեցիր, ալ սկսէ Անոր մէջ

հանգչիլ: Հանդարտ հոգիի մը զօրութիւնը չի կրնար ծածկուիլ: Տէրոջը մէջ հանգչելով աւելի պիտի նմանիս Փրկչիդ:

ԱՆՈՐ ՍՊԱՍԷ

«Անոր սպասէ»: Ոչ թէ միայն հանգչելու ենք, այլ սպասելու ենք մինչեւ որ Աստուած շարժի: Խնդիր մը Աստուծոյ յանձնելէ վերջ՝ սպասելու ենք մինչեւ որ Անիկա գործի սկսի: Մենք շատ անգամ մեր խնդիրները Աստուծոյ կը յանձնենք, սակայն երբ կը տեսնենք թէ Ան մեր փափաքածին չափ արագ չի շարժիր, զանոնք իր ձեռքէն առնելու կ'արտորանք: Եթէ չսպասենք, Տէրը երբէք չկրնար մեր խնդիրները կարգադրել ու ի կատար հանել: Պենտէկոստէին Սուրբ Հոգին անոնց վրայ իջաւ, որ Երուսաղէմի մէջ սպասեցին մինչեւ որ Պենտէկոստէի օրն հասաւ: Սպասելը կը ցուցնէ թէ կը հաւատանք Անոր, որուն կ'սպասենք: Եւ ոչ թէ միայն սպասելու ենք, հապա «համբերութեամբ սպասելու» ենք: Մենք երբեմն կ'սպասենք, սակայն սպասելու միջոցին, մեր սենեակին մէջ վեր վար կը քալենք, այս դուռը կը հրենք, այն դուռը կը հրենք, զրեթէ կը հիւանդանանք անհամբերութենէ ու կ'ըսենք թէ Աստուած շատ կամաց կը շարժի: Եթէ համբերութենէ զուրկ ես, Աստուած յաճախ շարաթներով ու ամիսներով քեզի սպասել կուտայ մինչեւ որ համբերութեամբ սպասես: Շատ անգամ պիտի տեսնես թէ պատասխան պիտի չառնես, մինչեւ որ սկսիս հանդարտութեամբ քու առօրեայ գործերուդ հետեւիլ ու մինչեւ որ Աստուած յարմար տեսնէ շարժելու: Քու անհամբերութեանդ համար Աստուած պիտի ստիպուի քեզի սպասել մինչեւ որ իր շնորհքը քեզի յայտնելու կարող ըլլայ: Այո, սպասելու ես, և համբերութեամբ սպասելու ես: Հոս ու հոն վազող այդ անհամբեր հոգիդ արդեօք պատճառ չեղա՞ւ որ Աստուած չկրցաւ քեզ անմիջապէս ազատել: Նոյն ինքն քու անհամբերութիւնդ Աստուծոյ ձեռքերը կապեց:

Մի նեղանար: Տէրը քաջ գիտէ թէ ինչպէս վարուելու է քու բոլոր թշնամիներուդ հետ: Երբ ինքզինքդ փորձութեանց մէջ կը գտնես, Տէրոջը յուսա: Անիկա քեզի պիտի ցուցնէ թէ ինք արժանի է քու վստահութեանդ ու երբէք պիտի չի լքէ քեզ:

Տէրոջմով ուրախացիր: Քու սրտիդ ցնծութիւնը թող ըլլայ Անոր հետ հաղորդակցութիւն ունենալ: Զայն սիրէ անկեղծ ու փափուկ սիրով մը

ու Անոր հնազանդելով ցուցուր քու սէրդ Անոր հանդէպ: Անիկա ըսաւ՝ «Եթէ զիս կը սիրէք, իմ պատուիրանքներս պահեցէք»: Անիկա իր բաժինը պիտի ընէ ու աւելին ալ, քանզի նաև կ'ըսէ՝ «Իմ անունովս ինչ որ խնդրէք, պիտի կատարեմ զանիկա»: Անիկա քու սրտիդ փափաքները պիտի տայ:

Տէրոջը յանձնէ քու Յամբադ: Մի ջանար քեզի առաջնորդութիւն ընել: Ամէն բան Անոր յանձնէ: Եթէ կեանքդ բոլորովին Անոր չի յանձնես, Անիկա չկրնար քեզի առաջնորդել: Եթէ Անոր յանձնես, ինք շաւիղներդ կ'ուղղէ:

Տէրոջը մէջ հանգչէ: Հանգստեան սուրբ վայր մը կայ: Անոր մէջ ապաստանարան գտա՞ր:

Համբերութեամբ Անոր սպասէ: Ազատութեան ճամբայ մի փնտռեր: Հոս ու հոն մի վազեր: Սիրտդ թող խաղաղի: Սպասէ մինչեւ որ Ան շարժի: Անիկա պիտի շարժի ու ամէն ինչ աղէկ պիտի ըլլայ:

Այս խօսքերը միտքդ պահէ և անոնց վրայ մտածէ ու կեանքիդ մէջ առատ պտուղ յառաջ պիտի բերեն:



ՇՈՂԵՐ ԵՒ ՇԱՂԵՐ ԿԵՆԱՑ ԱԾՈՒՆԵՐԷՆ

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՄԻՋՈՑԱԻ ՄԱՂԷՆ

Ա. ԶԱՏՈՒԱԾ

Քանի մը տարի առաջ Զինաստանի խոռվութեան ընթացքին Զանկ անուն զինուոր մը գերի ինկաւ ու դատապարտուեցաւ գնդակահարութեան: Գնդակահարուելէ առաջ պաշտօնատուն տարին զայն և զինուորական հագուստը վրայէն հանեցին ու տախտակամածին վրայ մէկ կողմ նետեցին: Քիչ յետոյ սպան եկաւ և իր ոտքովը հագուստին կից մը զարնելով հրաման ըրաւ որ մէջտեղէն վերցնեն: Այդ պահուն վերարկուին զրպանէն պզտիկ գիրք մը ինկաւ, սպան զայն առաւ ու երբ տեսաւ թէ Նոր Կտակարան մ'է շատ զարմացաւ: Երբ հարցուց թէ այս հագուստը և գիրքը որո՞ւնն են, հասկցաւ որ գնդակահարուելու տարուող Զանկինն են: Անմիջապէս լուր

ղրկեց որ զայն ետ զրկեն ու անոր ազատութիւն տուաւ։ Որքան ալ այս չինացի սպան հեթանոս մըն էր, սակայն քրիստոնեաներու և անոնց զրքին հանգէպ մեծ յարգանք ունէր։ Չանկ իր Նոր Կտակարանին միջոցաւ մահէն ազատուեցաւ։

Աստուծոյ խօսքը ամեն ատեն մեր քովը կրել լաւ է, աւելի լաւ է զայն մեր սիրտերուն մէջ կրել, այսպէս՝ ան կեանքի ամեն պարագաներուն մէջ մեզի կ'օգնէ, ան կ'առաջնորդէ մեզի, կ'զգուշացնէ ու կը մխիթարէ մեզ և մեղքի գերութեանէն ու յաւիտենական կորուստէն կ'ազատէ։



ԱՆՁՆԱՍՊԱՆՈՒԹԵՆԷ ԱԶԱՏՈՒԱԾ

Նոր Ուտի Փրկութեան Բանակի նուագապետը Կայլս վերջերս վազանձի առթիւ Գանատա կը դտնուէր։ Իր փողը իր քովն էր և իրիկուն մը իրմէ խնդրուեցաւ որ երգ մը նուագէ։ Նա լաւ ճանչցուած երգի եղանակ մը ընտրեց։ Քանի մը օր վերջ տեղւոյն Փրկութեան Բանակին հարիւրապետին քով ամուսնացած զոյգ մը եկան ու պատմեցին թէ իրենք անձնասպան ըլլալու համար ինչպէս դուռը, պատուհանները և դրան բանալիի ծակը գոցած էին իբր նախապատրաստութիւն օգային կազը դարձնելով իրենց կեանքին վերջ տալուն։ Բատրոն բաց ձգուած էր, յանկարծ շատոնց մոռցուած եղանակի մը նուագին անուշ ձայնը եկաւ ու քիչ յետոյ ալ ատենօք լաւ սիրուած բառերը լսուեցան։ Կազին ծորակը չբացուեցաւ, հապա դուռն ու պատուհանները ու յուսահատ զոյգը կեանքի պայքարը վերստին դիմադրաւեցին։

«Եթէ Քու օրէնքդ իմ մխիթարութիւնս չըլլար, ան ատեն կորսուած պիտի ըլլայի իմ տրտմութեանս մէջ»։ Սաղմ. ՃԺԺ 92։



ԱԻԵԼԻ ՄԵԾ ԹԱԳԱՒՈՐԻ ՄԸ ԴԵՍՊԱՆԸ

Պատ. Նիգօլաուս Լանկէ 1693ին Շուէտի կառավարութեան Վիէնայի դեսպանատան քարոզիչն ըլլալու զրկուեցաւ։ Այն ատենուայ դեսպանը Գոնթ տը Հորն էր։ Քարոզիչին Վիէնայ հասնելէն քանի մը շաբաթ վերջ, իրիկուն մը Գոնթին ծառան քարոզիչին տունը ապաստանեցաւ, քանզի իր տէրը բարկութեան մէջ մերկ սուրով զինք հալածած էր։ Հետեւեալ առտու

քարոզիչը դեսպանը տեսնել ուզեց, բայց նա մերժեց, կ'երեւի թէ վախցաւ որ արժանիօրէն պիտի յանդիմանուէր։ Այն ատեն պատուելին առանց արտօնուելու ներս մտաւ։ Գոնթ անոր, «Պարոնը իմ դեսպան մը ըլլալս չի՞ գիտեր» ըսելով վրան պոռաց։ Այն ատեն Լանկէ ըսաւ, «Ես ալ դեսպան մըն եմ և աւելի մեծ թագաւորի մը դեսպանը և ստիպուած եմ ձեզի լուր տալու թէ երէկ տեղի ունեցած դէպքին վրայ ձեր հոգին ինչպիսի վտանգի մը մէջ է։ Ես պատրաստ եմ իմ պաշտօնէս հրաժարելու, քան թէ իմ պարտականութիւնս կատարելէ»։

Աստուած իր այս ծառային քաջ վերաբերումը օրհնեց, այնպէս որ դեսպանը անմիջապէս խոնարհեցաւ և մինչեւ իսկ խնդրեց որ ասկէ վերջն ալ չխնայէ իրեն, երբ ո եւ է ատեն, Աստուծոյ պատուէրներուն անհնազանդ գտնուի։



ԼՈՒՍԻՆ ՄԸ ԸԼԼԱԼ ՈՒՁԵՅ

Տիկին մը իր պզտիկ քեռորդիին «Յիսուս կ'ուզէ որ արեւի ճառագայթ մը ըլլամ» երգը սորվեցնել կ'ուզէր։ «Ի՞նչ է ճառագայթ» հարցուց տղան. մօրաքոյրը բացատրեց։ Բայց մօրաքոյր, «Ես արեւի ճառագայթ մը ըլլալ չեմ ուզեր, հապա լուսին մը ըլլալ կ'ուզեմ խաւարի մէջ լուսաւորելու։ Այս խօսքը մօրաքոյր խորհելու խիստ ընդարձակ նիւթ տուաւ։

Այս մանկական զգացումը գեղեցիկ կերպով կը պատկերացնէ քրիստոնեային պարտականութիւնը որ եւ է վառող և փայլեցնող լոյս մը ըլլալու խաւարին և մեղքով լեցուն աշխարհի մը մէջ։ «Որպէսզի ըլլաք ամբիժ ու անարատ, Աստուծոյ որդիներ առանց մեղադրանքի, կամակոր ու խոտորեալ ազգին մէջ, որոնց մէջ դուք լուսաւորներու պէս կը փայլիք այս աշխարհի մէջ»։ Փիլ. Բ 15։

Հաւաքեց՝ Ժ. Կ. Պ.

ՆՇՄԱՐՆԵՐ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՀԱՄԱՐ



Ամենալաւ մեքենան ամենադոյզն ժխորով կ'աշխատի։ Աստուծոյ զաւակներուն համար ալ ասկէ մեծ դաս կարելի է սորվիլ։



ՔՐԻՍՏՈՍԻ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ԱՆՈՐ ԱՊՍԳԱՆ

Մաթ. ԺԶ 13-18

ԵԿԵՂԵՑԻՆ ԱՊՍԳԱՆ

Սողոմոն կ'ըսէ, «Մէկ բանին վախճանը սկիզբէն աղէկ է» Ժող. 7 : 8: Երբ Քրիստոս իր եկեղեցին սկսաւ, անոր վախճանը մտքին մէջ ըլլալով սկսաւ. Ան իր քահանայապետական աղօթքին մէջ հօրը աղօթեց ըսելով. «Ո՛վ հայր, զանոնք որ Դուն ինծի տուիր, կ'ուզեմ որ ուր ես եմ, անոնք ալ ինծի հետ հոն ըլլան, որպէսզի տեսնեն իմ փառքս զոր ինծի տուիր» Յովհ. 17 : 24: Կուգայ այն օրը որ մեր Տէրոջը այս աղօթքը պիտի պատասխանուի, երբ «Մեր աչքերը թագաւորը իր վայելչութիւնովը տեսնեն» Ես. 33 : 17:

Քրիստոսի եկեղեցիին ապագայ փառքին վրայով ալ համառօտ գաղափար մը ունենալ կ'արժէ: Միտքդ բեր և տես որ Աստուծոյ շնորհքը քեզի համար մեծ բարիքներ պատրաստած է, «զորոնք աչք չէ տեսեր և ախանջ չէ լսեր ու որոնք մարդու սրտին մէջ չեն ինկեր, Աստուած զինք սիրողներուն համար պատրաստեց»:

1. Սուրբերուն յափշտակութիւնը, «վասնզի Տէրը ինք ազգարարութեան հրամանով, հրեշտակապետին ձայնովը ու Աստուծոյ փողովը երկինքէն պիտի իջնէ, և Քրիստոսով մեռածները առաջ յարութիւն պիտի առնեն, ետքը մենք ալ որ ողջ մնացած ենք՝ անոնցմով մէկտեղ պիտի յափշտակուինք ամպերով Տէրոջը առջեւ ելլել օդին մէջ, և այնպէս յաւիտեան Տէրոջը հետ պիտի ըլլանք» Ա. Թեա. 4 : 13, 16:

Այս դէպքը, ոչ մեր մեռնելովը մեր հոգիներուն Յիսուսի հետ ըլլալու համար երթալն է, ոչ Հոգին Սուրբին Պէնտէկոստէի օրը գալն է, ոչ ալ եօթանասուն թուականին հոգմայեցի Տիտոսին միջոցաւ Երուսաղեմի աւերակ ըլլալն է, Աստուծոյ խօսքին լուսովը տրամաբանութիւն ունեցող մէկը վերոյիշեալ համարները այսպէս չհասկնար:

Քրիստոսի երկրորդ գալստեան սրբացուցիչ և արթուն պահող վարդապետութիւնը սուրբ զրային կերպով չհասկցողները ի զուր կը ջանան ըսել թէ թէեւ Պողոս առաքեալ իր պաշտօ-

նին սկիզբը Քրիստոսի գալուստը խիստ շատ կը տեսնէր, բայց վերջը իր միտքը փոխեց: Այսպիսի գաղափար մը Պողոս առաքեալ բնաւ չգրեց, կարգա՝ անոր տաանը չորս թուղթերը և պիտի տեսնես որ «ամեն թուղթերուն մէջ ալ այս բաներուն վրայով կը խօսի» Բ. Պետ. 3 : 16:

Այս ճշմարտութեան շուրջ Պողոս առաքեալին գրած թուղթերէն առաջինն էր Ա. Թեա. 13-14-ը, որուն չորրորդ գլխուն մէջ կարդացինք, նոյնիսկ Քրիստոսի երկրորդ գալուստին ինչպէս ըլլալը. նոյն գիրքին մէջ առաքեալը մեզի լուր կուտայ որ իր գրածները մարդոց խօսքեր չեն, հապա Աստուծոյ խօսքը, Ա. Թեա. Բ 13 «վասնզի զայս կը գրուցենք ձեզի Տէրոջը խօսքովը» Դ. 14: Ուրեմն գիտնանք որ առաջին քայլը որ մեր առջեւ կը կենայ, յափշտակութիւնն է:

2. Մեր ապականացու և խոնարհ մարմինները պիտի փոխուին: «Բայց մեր քաղաքակա-նութիւնը երկինքն է, ուրկէ ալ Փրկչին կը սպասենք, Տէր Յիսուս Քրիստոսի, որ պիտի նորոգէ մեր խոնարհ մարմինը՝ իր փառաւոր մարմինին կերպարանակից ըլլալու, այն գօրութիւնով որ կարող է ամենը իրեն տակ հնազանդեցնելու». Փիլ Գ 20, 21:

Կարելի է որ այս տողերը կարդալու ատեն կամ գլուխդ կը ցաւի, կամ մարմինիդ մէջ ուրիշ ցաւեր կամ տկարութիւններ կ'զգաս, և կամ անկողինի մէջ հիւանդ պառկած ես, աղօթքս այս է որ մեր Փրկչին անփոփոխ խօսքերը և խոստմունքները քեզ ուրախացնեն և քաջալե-րեն, որ քիչ վերջը այս ապականացու մարմինդ Տէր Յիսուսի փառաւոր մարմինին կերպարա-նակից պիտի ըլլայ: Կարգա՝ նաեւ Ա. Կորն. 13 : 51—58, վստահ եմ որ մեծապէս պիտի մխիթարուիս:

3. Տէր Յիսուսը պիտի տեսնենք. «Բանզի հիմա մենք որպէս թէ հայելիի մէջ կը տեսնենք անյայտ կերպով, բայց այն ատեն երես առ երես, հիմա շատէն քիչ մը տեղեակ եմ, բայց այն ատեն այնպէս պիտի ճանչնամ ինչպէս ճանչցուեցայ». Ա. Կորն. 13 : 12: Երբ Պողոս Անոր փառքը Դամասկոսի ճամբուն փրայ տեսաւ, գետինը ինկաւ և աչքերը կուրցան: Երբ Յովհաննէս զայն Պատմոսի կողմին մէջ յայտնու-թիւնով տեսաւ, մեռելի պէս ինկաւ, որովհետեւ այս մահկանացու աչքերով զԱյն տեսնել և Անոր փառքին դիմանալ անկարելի է. անոր համար յափշտակութեան օրը Սուրբ Հոգին առաջին գործը որ մեր վրայ պիտի ընէ մեր

մարմինները փոխելն է, անապականացու և անմահ մարմիններու, անկէ անմիջապէս վերջն է որ օգին մէջ ելլելով զինք պիտի տեսնենք, թէեւ այս երկու զէպքերուն մէջ հազիւ թէ երկվայրկեան մը կրնայ ըլլալ: Խորհած ես թէ ինչ ըսել է Տէր Յիսուսը տեսնել իր փառքովը և իր գեղեցկութիւնովը:

4. Անոր պէս պիտի ըլլանք. ոչ թէ միայն զայն պիտի տեսնենք, հապա նաեւ Անոր պէս պիտի ըլլանք, «Սիրելիներ, հիմա մենք Աստուծոյ որդիներն ենք, և տակաւին յայտնի չէ թէ ինչ պիտի ըլլանք, բայց զիտենք որ երբ Անիկա յայտնուի, Անոր պէս պիտի ըլլանք, վասնզի զԱնիկա պիտի տեսնենք ինչպէս է»։ Ա. Յովհ. 3 : 4: Ի՞նչ չափով պիտի հասկնանք այս խօսքերը, մանրամասնօրէն չենք գիտեր, «տակաւին յայտնի չէ թէ ինչ պիտի ըլլանք», բայց խօսքին տուած լուսովը այսչափ գիտենք որ, ինչպէս Քրիստոս անմահ է, մենք ալ անմահութիւն պիտի հազնինք, ինչպէս Քրիստոս փառաւոր է, մենք ալ նոյնպէս իրեն փառքին պիտի արժանանանք, ինչպէս Քրիստոսի համար հեռաւորութեան արգելք մնացած չէր և ուզած ատեն ուզած տեղը կրնար երթալ, նոյնը մենք պիտի ըլլանք: Ինչպէս Քրիստոս, զոնները գոցուած ատեն ներս կրնար մտնել, և մտնելէն յետոյ ալ կրնար ըսել թէ՛ մարմին, միա և ոսկորներ ունի. Դուկ. 24 : 36—43, նոյնպէս մենք պիտի ըլլանք բոլորովին գերբնական վիճակով մը:

5. Յաւիտեան Անոր հետ պիտի ըլլանք, և իրեն հետ պիտի թագաւորենք. ահա այս է Քրիստոսի եկեղեցիին ապագան: Աշխարհս մութը կոխած է և այս մութը երթալով կը թանձրանայ, կառավարութիւնները տագնապի մէջ են և մարդոց սիրտը վախով լեցուած է, խաղաղութիւն կը խոստանան, գործադուլի համար կը պատրաստուին, արդարութիւն կը խոստանան բայց իրենք անիրաւութեան չուաններով կապուած կ'երթան զէպի յաւիտեանական կորուստ, և կը պատրաստուին այն մեծ Արմագէդոնի պատերազմին համար, որ ամենուն կորստեան դաշտը պիտի ըլլայ, և իրենց մարմիններն ալ երկինքի թռչուններուն կերակուր. Յայտ. 19 : 17—21: Ասոնք պիտի կատարուին այն ատեն, երբ Տէր Յիսուս Քրիստոս, Թագաւոր Թագաւորաց եւ Տէր Տէրանց, մեծ փառքով և զօրութեամբ, իր փառաւոր եկեղեցին ալ մէկտեղ երկինքէն վար իջնեն. Յայտ. 19 : 11—16:

Ներկայիս խաղաղութեան իշխանը իրենց

համաժողովներէն դուրս ձգող աշխարհի իշխանները և զօրաւորները այն ատեն իրենց անմտութիւնը, և իրենց բոլոր աշխատանքներուն իրենց համար յաւիտեանական ամօթի պատճառ ըլլալը պիտի տեսնեն: «Ու երկրի թագաւորները և մեծամեծները ու հարուստները, հազարապետները և զօրաւորները, ու բոլոր ծառաները ու բոլոր ազատները այրերու և լեռներու ապառաժներուն մէջ պահուլտեցան, և լեռներուն ու ապառաժներուն կ'ըսէին, մեր վրայ ինկէք ու մեզ ծածկեցէք անոր երեսէն որ աթոռին վրայ կը նստի, ու Գառնուկին բարկութենէն, վասն զի Անոր բարկութեան մեծ օրը եկաւ, և ո՞վ կրնայ դիմանալ»: Յայտ. 6 : 15—17:

Տէր Յիսուս հիմա Աստուծոյ աջ կողմը նստած փրկիչ է բոլոր անոնց որ իրեն կուգան, Անոր բազուկները յաւիտեանական ապաստանարան են բոլոր անոնց համար որ իր կոչումը կ'ընդունին: Բայց Ան օր մը պիտի ելլէ իր նստած տեղէն, Հօրը աջ կողմէն և թշնամիները իր ոտքին պատուանդան պիտի դրուին, Սաղմ. 110 : 4, Գործք. 2 : 34—35: Նոյնպէս Քրիստոսի եկեղեցին որ Աւետարանին քարոզութեան և հոգիներուն փրկութեան համար կեցած է և կը կենայ, որ աշխարհէ անարդուած է և նախատուած, այն օրը Քրիստոսի հետ փառքով պիտի յայտնուի. «Երբ Քրիստոս մեր կեանքը յայտնուի, այն ատեն դուք ալ անոր հետ փառքով պիտի յայտնուիք»։ Կող. 3 : 4: «Այն ատեն արեւի պէս պիտի փայլին արդարները իրենց Հօրը թագաւորութեանը մէջ»։ Մատթ. 13 : 43:

Ամերիկացի միսիոնար մը տարիներ յետոյ իր միսիոնարական դաշտէն երկիր վերադառնալու համար Նիւ Եորք կը մտնէր: Նոյն օրը Ամերիկայի առջի նախագահներէն մին ալ Եւրոպայէն Նիւ Եորք կը վերադառնար: Հարիւրաւոր բարեկամներ զայն կը դիմաւորէին, նուազարաններով և ոստիկաններու մեծ բազմութիւնով մեծ պատիւ կուտային: Տէրոջը ծառան, միսիոնարը, որուն դէմ մէկը եկած չէր, օթեւան մը գնաց և միա մինակը ինքզինք լքեալ վիճակի մը մէջ տեսնելով և Աւետարանի համար իր աշխատանքը և ջանքերը Տէրոջը առջեւ յիշելով ըսաւ, գոնէ մէկ բարեկամ մը չգտնուեցաւ որ զիս դիմաւորէ կամ բարիգալուստ մաղթէ ինծի, բայց Տէրը ըսաւ անոր, «Զաւակս դուն ղեռ տունդ չեկար, Ամերիկա վերադարձար: Մենք հոս քեզի համար մեծ և փառաւոր բարիգալուստ մը կը պատրաստենք, այն ատեն ես պիտի հրամայեմ որ երկինքի երգիչ խումբը և բոլոր քնարահար-

ները քեզ դիմաւորեն որ մեծ ցնծութեամբ Աստուծոյ քաղաքը, քու Հօրդ տունը մտնես»:

«Ու երկինքէն մեծ ձայն մը լսեցի որ կ'ըսէր. Ահա Աստուծոյ խորանը մարդոց մէջ, և Անիկա անոնց հետ պիտի բնակի, և անոնք Անոր ժողովուրդը պիտի ըլլան, և Աստուած Ինք անոնց հետ պիտի ըլլայ իբրեւ անոնց Աստուածը. և Ինք անոնց աչքերէն բոլոր արցունքները պիտի սրբէ, և ալ մահ պիտի չըլլայ, ոչ սուգ և ոչ աղաղակ և ոչ ցաւ պիտի ըլլայ ասկէ ետեւ. վասնզի առաջուան բաները անցան». Յայտ. 24 : 3, 4:

Ահա այս է Քրիստոսի եկեղեցիին ապագան:

Ո՛վ ընթերցող, եթէ դուն այս եկեղեցիին անդամ եղած ես, ուրեմն Քրիստոսի, քու երկնային Փեսայիդ երկրորդ զաւստեան սպասելով այս «երջանիկ յոյսը» ամեն օր քու մխիթարութիւնդ ըրէ: Վեր նայէ, Տէրը կուգայ:

Տէրոջը ծառայութեան մէջ ձեր եղբայրը,

Ճիւղատէլֆիա

Վեր. Պ. Ս. ԱԿԻԻԼԵԱՆ



Ս. ԳՐԱԿԱՆ
ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ

Քաղեց՝
SCOFFIELDԷՆ

Վ. ՍԱՀԱԿԵԱՆ

ՈՒԹԸ ՈՒԽՏԵՐԸ

Բանբերի անցեալ թւոյն մէջ սերտեցինք եօթը տնտեսութիւնները զորոնք Աստուած Իր Ս. Հոգիին միջոցաւ իր Ս. Խօսքին մէջ յայտնած է: Տնտեսութիւններուն հետ զուգընթաց կ'երթան ուխտերը՝ բայց անոնցմէ կը զանազանուին սա յատկանիշով որ տնտեսութիւնը մարդուն հնազանդութիւնը փորձի ենթարկող եղանակ մը և ժամանակաշրջան մըն է՝ մինչդեռ ուխտը՝ անպայման ըլլալով յաւիտենական է:

1. Եղեմական ուխտը. Ծննդ. Ա. 28. — Եղեմական ուխտը Ս. Գրոց յիշած 8 մեծ ուխտերէն առաջինն է կեանքը և փրկութիւնը պայմանաւորող: Աստուածաշունչը ամբողջ այս 8 ուխտերուն շուրջ կը բերեղանայ: Առաջին ուխտը 7

տարրեր ունի, որուն Ադամ և իր կինը պատասխանատու էին Եղեմի մէջ:

ա. Երկիրը լեցնել նոր կարգով մը — մարդով: Երկիրը ծառայեցնել մարդկային օգտասկարութեան.

գ. Բոլոր կենդանիներուն վրայ իշխել (կառավարել).

դ. Սերմ ունեցող խոտեղէն և պտղեղէնները ուտել.

ե. Պարտէզը գործել (մշակել) և պահել.

զ. Բարւոյ և չարի գիտութեան ծառէն չուտել.

է. Պատիժը — մահ:

2. Ադամական ուխտը. Ծննդ. Գ. 14. — Այս ուխտը կը պայմանաւորէ ինկած մարդուն կեանքը: Այս պայմանները պէտք է մնան մինչեւ թագաւորութեան դարը՝ երբ «ստեղծուածները իրենք ալ ապականութեան ծառայութենէն ազատուելով, Աստուծոյ որդիներուն փառաւոր ազատութեանը հասնին». Հոով. Ը. 21: Ադամական ուխտին տարրերն են.

ա. Օձը, սատանային գործիքը կ'անիծուի և կը դառնայ բնութեան մէջ մեղքի արդիւնքները ցուցնելու համար Աստուծոյ կողմէ գործածուած նշանակ մը: Օձը որ ստեղծագործութեան մէջ ամենէն գեղեցիկ, նուրբ և խորամանկ արարածն էր, կը դառնայ ամենէն զարշէլի սողունը:

բ. Փրկչի մը առաջին խոստումը: Հոս կ'սկսի Արքայական «սերունդը», «Սեթ»էն մինչեւ էմմանուէլ — Քրիստոս:

գ. Կնոջ փոխուած դիրքը: Մեղքին մոտաքը անկարգութիւն յառաջ բերած ըլլալով՝ իշխանութիւն մը անհրաժեշտ կը դառնայ և այս իշխանութիւնը մարդուն կը տրուի. Ա. Կոր. ԺԱ. 7—8, Եփես. Ե. 22—23:

դ. Երկիր մարդուն պատճառաւ անիծուած է: Կեանքը անխուսափելիօրէն տխուր կը դառնայ:

զ. Եղեմի թեթեւ աշխատութիւնը տաժանակիր կը դառնայ:

է. Մարմինը մահուան կը դատապարտուի. Հոով. Ե. 12—21:

3. Նոյեան ուխտը. Ծննդ. Թ. 1. — Այս ուխտին տարրերն են.

ա. Մարդուն ադամական ուխտին ժամանակէն երկրի հետ ունեցած առնչութիւնը նոյնն է. Ը. 21:

բ. Բնութեան կարգ ու կանոնը նոյնն է. Ը. 22:

գ. Մարդկային կառավարութիւն կը հաստատուի. թ 1—6:

դ. Աշխարհ ուրիշ ջրհեղեղեան դատապարտութենէ մը կ'ապահովուի. Ը 21, թ 11:

ե. Մարգարէացուած է թէ Բամէն պիտի գար աւելի ցածագգի և ծառայող սերունդ մը. թ 24, 25:

զ. Մարգարէացուած է թէ Սեմ մասնայատուկ յարաբերութիւն պիտի ունենայ Եհովայի հետ. թ 26, 27: Աստուածային ամեն յայտնութիւն սեմական ցեղի մարդոց միջոցաւ է, և Քրիստոս, մարմնի կողմանէ, Սեմի սերունդէն կուգայ:

է. Մարգարէացուած է թէ Յարէթէն պիտի գային աւելի «ընդարձակուած» ցեղերը. թ 27: Կառավարութիւն, գիտութիւն, զեղարուեստ, ալ աւելի Յարէթեան ազգերէն ելած են: Այսպէսով պատմութիւնը անվիճելի արձանագրութիւնն է այս մարգարէութեանց ճշգրիտ կատարման:

4. Աբրահամեան ուխտը. Իննդ. Ժե 18. — Այս ուխտը առաջին անգամ յայտարարուեցաւ Ծննդ. ԺԲ. 1—4 և կրկին կրկին հաստատուեցաւ. Ծննդ. ԺԳ 14—17, ԺԵ 1—7, ԺԶ 1—8. ունի 7 յատակ մասեր.

ա. «Քեզ մեծ ազգ պիտի ընեմ» հրեայ ազգը, Քրիստոսի եկեղեցին (նաեւ Իսմայէլի սերունդը).

բ. «Քեզ պիտի օրհնեմ» մարմնաւորապէս և հոգեւորապէս.

գ. «Քու անունը պիտի մեծցնեմ» Աբրահամ անունը տիեզերական դարձած է.

դ. «Ու դուն օրհնութիւն պիտի ըլլաս» Գաղ. Գ. 13, 14.

ե. «Քեզ օրհնողները պիտի օրհնեմ». Ասոր կատարումը սերտօրէն կապուած է յաջորդ նախադասութեան հետ.

զ. «Ու Քեզ անիծողները պիտի անիծեմ». պատմութեան ընթացքին ասիկա հրաշալիօրէն կատարուած է. Հրեաները ցըրուած ըլլալով աշխարհի բոլոր ազգերուն մէջ՝ զանոնք պաշտպանող ազգերուն լաւ եղած է և զէշ վերաբերողներուն զէշ: Այս կէտը ապագային մէջ աւելի հրաշալիօրէն պիտի կատարուի. Յովել. Գ 1—8 եւայլն.

է. «Ու երկրի բոլոր ազգերը քեզմով պիտի օրհնուին»: Ասիկա Աւետարանական մեծ խոստումն է որ Աբրահամի սերունդին

մէջ կատարուեցաւ, այսինքն Քրիստոսի մէջ. Գաղ. Գ 16, Յովհ. Ը 56—58:

5. Խովսիսական ուխտը. Ելից ԺԹ 25. — Մովսիսական ուխտը Իսրայէլի տրուեցաւ երեք բաժանումներով որոնցմէ իւրաքանչիւրը միւս երկու բաժանումներուն համար կենսական կարեւորութիւն ունէր, և միասին կը կազմեն Մովսիսական ուխտը: Պատուիրանքները, դատաստանները և կանոնադրութիւնները: Առաջինը Աստուծոյ արդար կամքին արտայայտութիւնն էր. երկրորդը Իսրայէլի ընկերական կեանքը կը կառավարէր և երրորդը անոնց կրօնական կեանքը: Երեքին միասին օրէնք անունը կը տրուի: «Օրէնքը բան մը կատարեալ չըրաւ՝ և (Քրիստոսով) օրէնքին տեղ կը մտնէ լաւագոյն յոյս մը որով Աստուծոյ կը մօտենանք». Եբր. Է 19):

6. Պաղեստինեան ուխտը. Բ. Օր. 2 3. — Այս ուխտը կուտայ այն պայմանները որով Իսրայէլ խոստացեալ երկիրը մտաւ: Կարեւոր է նկատել թէ անոնք ազգովին դեռ երբեք չեն տիրացած Աբրահամեան անպայման ուխտով խոստացուած երկրին և բոլոր Պաղեստինի (բաղդ. Ծննդ. ԺԵ 18 և Թուոց ԼԴ 1—12):

Պաղեստինեան ուխտն ալ 7 մասեր ունի.

ա. Անհնազանդութեան պատճառաւ ցրուում. Բ. Օր. ԻԸ 63—68.

բ. Դեռ ցրուած վիճակի մէջ Իսրայէլի ապաշխարութիւնը. Բ. Օր. Լ 2.

գ. Տէրոջը վերադարձը. Բ. Օր. Լ 3 (Ամովս. թ 9—14, Գ. Առ. ԺԵ 14—17.

դ. Երկիր վերադարձը. Բ. Օր. Լ 5 (Եսայ ԺԱ 11, 12, Եզեկ. ԼԷ 24—25.

ե. Ազգովին ապաշխարութիւն. Բ. Օր. Լ 6. (Հո. ԺԱ 26, 27, Ովս. Բ 14—16.

զ. Իսրայէլը նեղողներուն դատաստանը հ. 7 (Ես. ԺԴ 1, 2, Մատթ. ԻԵ 34—46.

է. Ազգային բարգաւաճում. հ. 9 (Ամովս. թ 11—14:

7. Դաւիթի ճետ եղած ուխտը. Բ. Թագ. Է 8—17. — Այս ուխտին վրայ է որ «մարմնի կողմանէ Դաւիթի սերունդ»էն եղող՝ Քրիստոսի փառաւոր թագաւորութիւնը պիտի հաստատուի: Ասիկա կ'ապահովէ.

ա. Դաւիթեան տուն մը, այսինքն սերունդ, զերդաստան.

բ. Գահ մը, այսինքն թագաւորական հեղինակութիւն.

գ. Թագաւորութիւն մը, այսինքն տիրապետութեան շրջանակ.

դ. Յաւիտենական է.

ե. Եւ այս քառապատիկ վստահութեամբ տըրուած ուխտը՝ միայն մէկ պայման ունէր. Դաւիթի գերդաստանին մէջ անհնազանդութիւնը պիտի պատժուէր առանց սակայն ուխտին խափանման. Սաղ. 2թ 20—37, Եսայ. ԻԴ 5, ԾԴ 3: Թագաւորութիւնը ժամանակաւոր կերպով վերջ գտաւ գերութեամբ՝ բայց գերդաստանը շարունակուեցաւ մինչեւ Քրիստոս: Անիկա Երուսաղէմի մէջ թագադրուեցաւ բայց փուշերէ հիւսուած պսակով մը: Տէր Աստուած դեռ պիտի պսակէ այդ փշապատ ճակատը Դաւիթի աթոռին փառաց թագով:

Խիստ հետաքրքրական է նկատել նաեւ թէ այժմ Դաւիթի գերդաստանը կորսուած է, և մեր օրերուն՝ գիտակից հրեայ կրօնական հեղինակներէն ոմանք կ'ըսեն թէ իրենց սպասած Մեսիան քրիստոնեաներուն սպասած Քրիստոսէն տարբեր մէկը չկրնար ըլլալ՝ քանի որ Մեսիան Դաւիթի սերունդէն պէտք է գայ՝ և այսօր այդ սերունդը կորսուած է:

8. Նոր ուխտը. Եբր. Ը 8. — Ութերորդ, վերջին և յաւիտենականօրէն օրհնեալ ուխտն է նոր ուխտը: Այս մասին յաջորդիւ, եթէ Տէրը կամի:



ՏԵՐՈՉԸ ՇՆՈՐՀՔՈՎԸ ԵՍ ԱԼ

|||||

Բայց պիղծ ու պոռաւակուն առասպելներէն ետ կեցիր, եւ քու անձդ Աստուածապաշտութեան վարժեցուր, վասն զի մարմինին վարժութիւնը քիչ բանի օգտակար է, բայց Աստուածապաշտութիւնը ամէն բանի օգտակար է, որ թէ՛ ներկայ եւ թէ՛ ապագայի կեանքին խոստմունքը ունի:

Ա. Տիմոթ. Դ. 7—8

Ծնած եմ Խարբերդ, բարեպաշտ ընտանիքի մը մէջ: Հայրս՝ սարկաւազ Պէրպէր Մանուկ աղա անունով ծանօթ էր, որ մէկ թեւին տակ Սուրբ Գիւրգ և միւսին տակ հովանոց մը առած եկեղեցի կ'երթար:

Տարագրութեան ժամանակ ես 9—10 տարե-

կան էի երբ հայրս մեզմէ բաժնուեցաւ Մալաթիայի մէջ: Մալրս տարագրութենէ տարի մը առաջ իր սիրելի Փրկչին դացած ըլլալով՝ վեց պզտիկներս որը մնացինք և Աստուծոյ հրաշալի օգնութեամբը Ուրֆա ինկանք: Եւ հոն ամէնքս ալ հոգեզաւակ եղանք թուրքերու և Ասորիներու քով: Վերջը Ուրֆայի Ամերիկեան որբանոցին մէջ ես հոգեւորապէս արթնցայ, բայց հոգեւոր կեանքը լաւ չհասկնալուս, չկրցայ ապրիլ:

Երբ Հալէպ եկայ, Միւսլիմիյէ վեց ամիս քանթինի մը մէջ աշխատեցայ, միևնոյն ատեն սափրիչութիւն ալ կ'ընէի: Քանթինի մէջ սկսայ գողութիւն ընելով չար ընկերներու հետ յարաբերութիւն մշակել:

1921ին Պէյրութ կ'երթալով սափրիչի խանութ մը աշակերտութեան մտայ: Հոն աւելի չար ընկերներու հետ յարաբերութիւն ընելով՝ սկսայ ծխել, օղի խմել և ամէն տեսակ մեղք գործել: Ինքզինքս մարդ կը կարծէի այս մեղքերը գործելով:

1923ին Ֆրանսա մեկնելով, Մարսիլեայի մէջ հաստատուեցայ: Հոն մեղքի կեանքին մէջ աւելի յառաջ երթալով շատ ցաւալի կեանք մը վարեցի: Ամէն գիշեր գինով տուն կը դառնայի: Մտադրեցի Փարիզ երթալ և կանանց մագեր շինել ու կտրել սորվելով արհեստս զարգացնել և դրամ շահելով աշխարհը վայելել: Այս նպատակով Փարիզ գացի և շատ չանցած իբրեւ կանանց սափրիչ տեղում առի և վարպետ սափրիչ եղայ: Աշխարհը աւելի վայելելու նպատակաւ Նիս գացի 1928ին: Նիսէն Վիշի գացի, Ֆրանսայի մէջ ամենէն փառաւոր օգափոխութեան վայր մը, և հոն սկսայ կազինոներուն մէջ խումար խաղալ: Շահած դրամներս կորսնցնելով, երիտասարդութիւնս կը մաշեցնէի ամէն տեսակ մեղքերով: Վերջապէս Լիոն եկայ և հոն խանութ մը բացի: Շատ չանցած Ֆրանսացի օրիորդի մը հետ ամուսնացայ կառավարութեան պսակադրութեամբ և 14 ամիս յետոյ աղջիկ մ'ունեցանք յանին անունով: Սակայն ես ա'լ աւելի մեղքին անձնատուր կ'ըլլայի: Այս պահուն սիրելի եղբայրս Սամուէլ Երեմեան ինծի համար 10 տարիէ ի վեր կ'աղօթէ եղբր, չէի զիտեր:

1935ի Սեպտեմբերին լսեցի որ Վեր. Ա. Զ. Եղոյեան Լիոն եկած է և հոն հոգեւոր ժողովներ կ'ընէ: Այս պահուն մեր սիրելի պզտիկ աղջիկը հիւանդացած էր երեք ու կէս տարիքին մէջ և հիւանդանոց փոխադրեցինք զործողութեան համար:

Վեր. Ա. Զ. Եղոյեան հօրս բարեկամը և մեր

պատուելին եղած ըլլալուն համար, տակաւին ողջ մնացած սա սիրելի ծերուկ պատուելին տեսնելու փափաքով օր մը ժողովի գացի: Երբ բեմին վրայ տեսայ անոր սիրուն և ժպտուն դէմքը, փոքր սպիտակ մօրուքը, նիհարակազմ բայց առողջ մարմինը, և անոր բերնէն լսեցի Աստուածային շնորհալի խօսքերը, անոր դիմագիծը ճիշդ հայրիկիս դէմքը վերյիշել տուաւ ինծի, և աչքերս լեցուելով չկրցայ ինքզինքս բռնել ու սկսայ դառնապէս լալ: Յայնժամ երեք բան միտքս գրաւեց: Նախ՝ իմ մեղաւոր վիճակս, երկրորդ՝ հայրիկիս դէմքը և երրորդ՝ հիւանդանոցը պառկող աղջիկս: Պատուելին քարոզը չհասկցայ և նիւթն ալ չեմ յիշեր, քանզի Սուրբ Հոգին զիս խորապէս այցելած էր: Երբ կուլայի, յանկարծ լսեցի որ Պատուելին կ'ըսէր. «Մէկը եթէ ապաշխարէ, բնաւ չի զղար: Ո՞վ կ'ը փափաքի որ իրեն համար աղօթենք»: Նստած տեղս քրտինքի մէջ ըլլալով՝ մէկէն կայնեցայ և «Ինծի համար աղօթեցէք» ըսի ու նստայ: Պատուելին ըսաւ. «Երեմիա, ոտքի կեցիր»: Նորէն կայնեցայ և Պատուելին կրկնել տուաւ ինծի առաջուան ըսածս և իր ձեռքը ականջին հետեւը տանելով մտիկ ըրաւ: Յետոյ զիս և իմ հայրս ժողովուրդին ծանօթացուց թէ ես սարկաւազի մը զաւակն եմ և թէ հայրս ու մայրս ի՛նչպէս հոգեւոր անձինք ըլլալով ծառայած են Աստուծոյ և իրենց սիրելի Փրկչին: Եւ «Հոգեւոր Երգեր»էն 201րդ երգը առաջարկեց: Ես դառնապէս կուլայի երգեցողութեան պահուն: Երբ կ'երգուէր. «Կը հաւատամ, կը հաւատամ, որ Յիսուսի մահուամբն». Պատուելին՝ «Երեմիա, դուն այս երգը գիտես, երգէ՛» ըսաւ, և ձեռքը գլուխս դնելով աղօթք ըրաւ: Այն ատեն ես ապաշխարելով Տէրոջը յանձնուեցայ 1935, Սեպտ. 18ին: Յետոյ օթօյովս Վեր. Ժ. Կ. Պարսումեանի տունը տարի գինքը: Ծամբան ինծի ըսաւ. «Երեմիա, ո՛րչափ ուրախացուցիր այսօր հայրդ երկինքի մէջ, հիմա լուր տուին իրեն քու ապաշխարութեանդ մասին»: Ըսի Պատուելին որ աղջիկս հիւանդ է և թէ ես կրօնական պսակ չեմ եղած: Յաջորդ գիշեր ժողովէն վերջը մեզ պսակեց Վեր. Պարսումեանի տան մէջ: Երկու անգամ հիւանդանոց եկաւ և իր ձեռքը աղջկանս գլխուն վրայ դնելով աղօթք ըրաւ: Երկու անգամ մեր տունը այցելելով տիկնոջս խօսեցաւ, և անոր մէջ հոգեւոր արթնութիւն մը սկսաւ: Վերջապէս գիշեր մը Ֆրանսական Մկրտական եկեղեցիին մէջ տիկինս ալ ապաշխարեց: Տէրը զարմանալի կերպով գինքը բռնեց: Շատ չանցած Տէրը մեր սիրելի աղջիկը

Իր քովը տարաւ: Տէրը իր Հոգիովը և Վեր. Եղոյեանի քարոզներով ապաշխարած հաւատացեալներով մեզ մխիթարեց: Վեր. Եղոյեան մեր աղջկան մահը լսելով՝ մխիթարական նամակ մը գրեց: Նամակին մէջ ըսած էր թէ միասին կարդանք Յոր 1 և 2 գլուխները, նաև Եփես. 5. 20 և Մատթ. 19. 14 համարները: Անկէ վերջը մեզ առանց նամակի չթողուց մինչեւ իր մահը: «Ծունկի վրայ գալով երկուքդ միասին բարձրաձայն աղօթեցէք» և այլ շատ մը խրատներ կը գրէր ինծի իբրեւ հոգեւոր հայրիկս:

Հիմա փառք կուտամ որ Տէր Յիսուսի ձրի շնորհքովը մեր տանը փրկութիւն եղաւ: Մենք գիտենք որ մահէն կեանքի փոխուեցանք: Ալէլուիա:

Իմ երեք տարուան հոգեւոր փորձառութիւններս հետեւեալներն են. — Չեմ զղջացեր Յիսուսը իմ Տէրս կոչելու: Ս. Գիրքը որ Աստուծոյ խօսքն է, ինծի հացի և ջուրի պէս եղած է, որով հոգիս կը զօրանայ և շնորհքին մէջ ալ քայլեր կ'առնեմ: Սիրելի է ինձ առանձնանալ և սերտողութեան և աղօթքի ժամանակ տալ: Աղօթքի զօրութեան վրայ խիստ շատ վստահութիւն ունիմ, քանզի ես ալ հօր և մօր և սուրբերու աղօթքներուն պտուղն եմ: Ծնողներ, մի՛ թուլնաք ձեր զաւակներուն համար աղօթելու:

Տէրը զիս շատ մը մեղքերէ և աշխարհային փափաքներէ ազատեց և զիս անոնց հանդէպ յաղթական ըրաւ:

Ապաշխարելէս ի վեր սորվեցայ ազգս սիրել: Առաջ բնաւ չէի սիրեր զայն, բնաւ չէի հետաքրքրուեր ու է հաւաքոյթով կամ ժողովով կրօնական կամ աշխարհական և կուսակցական, — հայու դարձ է կ'ըսէի: Սակայն երբ ապաշխարեցի, Տէրը սրտիս մէջ բուռն սէր մը ստեղծեց ազգիս և ազգիս մէջ գտնուած անկեալ հոգիներուն հանդէպ. ու Տէրը սորվեցուց ինծի եթէ հարկ ըլլայ զոհուիլ անոր համար Յիսուսի սիրովը: Առայժմ տուներ և հիւանդանոցներ այցելելով այս սիրոյն ընթացք կուտամ, երբ որ Տէրը ուրիշ լոյս ցոյց տայ, անոր համաձայն ալ պիտի ընեմ Իր շնորհքով:

Տէրոջը առջեւ բրուտին հողին նման կ'ուզեմ ըլլալ և փափաքս է որ Ան որպէս բրուտ իմ վրաս գործէ և շաղէ զիս ու շինէ Իր ուղած ամանը:

Տէրոջմով ձեր տկար եղբայրը

Լիոն, Ֆրանսա

ԵՐԵՄԻԱ ԵՐԵՄԵԱՆ



ՉԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ



Ֆրանսահայ Աւետ. եկեղեցիներու Միութեան ժողովին (*) նախընթաց շաբթուն մէջ, Օգոստոս 24-28, մասնաւոր ժողովներու շարք մը տեղի ունեցաւ, երկուստեք հոգեւոր գործիչներու համար: Ժողովներուն նպատակն էր խորացնել թէ ժողովականներուն հոգեւոր կեանքը, թէ ալ զանոնք հետաքրքրել օրուան եկեղեցական կարեւոր հարցերով:

Ա.— Ժողովներուն կարեւոր մէկ մասը յատկացուեցաւ հետեւելու Oxfordի Concile Œuméniqueի վերջին աշխատութիւններուն: Վերջերս սկսած է նոր շարժում մը: Ամէն ազգի և յարանուանութեանց հոգեւոր առաջնորդներ, խրատուած ամէնօրեայ դէպքերէ, փափաքեցան միասին ժողովուրդի քննելու համար գործնական հարցեր, որոնց առջեւ անտարբեր չէր կրնար մնալ 20րդ դարու եկեղեցին: Օրինակ, վերջին նիստերուն քննուեցան, եկեղեցի և ազգութիւն, եկեղեցի և կառավարութիւն, եկեղեցի և դատարակութեան պէս ծանրակշիռ խնդիրներ: Շարժումը կը խոստանայ դառնալ հետաքրքրական և գործնական: Կարելի է զրեթէ հայրապետական ժողով մը կոչել զայն, զի ժողովներուն կը մասնակցէին մեծ թիւով կարեւոր անձնաւորութիւններ, որոնք նաև կը ներկայացնէին քրիստոնէական եկեղեցւոյ կարեւոր ճիւղերը, բաց ի զերման եկեղեցիներէ, որոնք օրուան պարագաներու բերմամբ, ահամայ չէին կրցած մասնակցել, և բաց ի կաթողիկէ եկեղեցիին, որ իր ներկայացուցիչները զրկած էր միայն իբր «գիտող»:

Մեր տնօրէնը հրաւիրած էր, Strasbourgէն Վեր. Sussը, վերլուծելու և քննադատելու Oxfordի վերջին մեծ ժողովին տեղեկագիրը «Les Eglises en face de leur tâche actuelle»: Առ այս, Վեր. Suss չորս դասախոսութիւններ ներկայացուց մեզի, մէն մի դաս պատրաստուած մեծ խնամքով և թափանցողութեամբ: Իր բերած վերլուծումներն ու թելադրութիւնները, միացած նոյն նիւթերուն շուրջ բարեկարգիչ Լուսէրի արտայայտած մտքերուն, յաճախ հետաքրքրական նորութիւններ եղան մեզի: Ամէն զասի

վախճանին, Dr. Berronի առաջնորդութեամբ, զաղափարի փոխանակութիւններ կատարուեցան օրուան դասին վերաբերեալ Աստուածաբանական, ընկերաբանական և այլ գործնական տեսակէտներու շուրջ:

Բ.— Այս ժողովներուն առթիւ, հաճոյքն ունեցանք նաև մեր մէջ ունենալու Vennesի Աստուածաբանական ճեմարանի նախկին ուսուցիչներէն Վեր. Bersier, որ նաև A. C. O.ի Զուիցերական յանձնախումբին քարտուղարն է: Վեր. Bersier ստանձնած էր ուսումնասիրել Պօղոսի դարձը, սրբացումը և տառապանքը: Նա մեզի խօսեցաւ իբր փորձառու մեծ եղբայր, քաջալերելով և լուսաւորելով զմեզ Պօղոսի օրինակովը:

Գ.— Մեր սիրելի տնօրէն, Վեր. Dr. P. Berron, հակառակ իր ճնշիչ զբաղումներուն, յանձն առած էր անձնական բաժին մ'ալ բերելու այս ժողովներուն և ստանձնած էր երկու ուսումնասիրութիւն, նիւթ ունենալով «Քրիստոնէական ճեմարտութիւններ ըստ Բ. Կորնթ. թուղթին»: Իր խորունկ և հոգեւոր ցուցմունքները, լուսաբանուած զաղափարի և փորձառութեանց ազատ փոխանակումով, շատ օգտակար եղան:

Յատուկ ժամանակ տրուեցաւ նաև աղօթա-ժողովներու, որոնք անցան տաքուկ և օրհնաբեր: Այսպէս բոլոր ժողովները խիստ շինարար եղան: Իսկ զիշերները յատկացուեցան Աւետարանչական ժողովներու, թէ Լիօնի թէ շրջակայքի մէջ:

Փարիզ

Զ. Բ. Պ.

ՄԻՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎՆԸ

Ֆրանսահայ Աւետ. եկեղեցիներու ԺԱՐԳ Միութեան ժողովը տեղի ունեցաւ Օգոստ. 29 — Սեպտ. 1, 1938, Լիօնի մէջ:

Համագումարին կը մասնակցէին A. C. O.ի կողմէ տնօրէն Վեր. Dr. P. Berron և Prof. L. Kuehm և Վեր. M. Rohr. Միութեանս յարգելի հիւրն էր Superintendent Mr. Ehmann.

Մարտէյէն՝ Վեր. Յ. Ն. Ղազարոսեան, Աւետարանիչ Վ. Սահակեան, Աւետարանիչ - Սր. Գրածախ Կ. Պատազեան, եղբ. Գէորգ Պարսամեան: Վալանտէն՝ Բրօֆ. Գ. Խայրիկեան, եղբայր Գ. Կիւրեղեան:

Բօն տ'Օպլընաւէն՝ Վեր. Ա. Օ. Փափազեան, եղբ. Ս. Սիմոնեան:

Լիօնէն՝ Վեր. Ժ. Կ. Պարսումեան, Աւետարանիչ Կ. Պարսումեան, եղբ. Լ. Նիկողոսեան:

Սէնթ-Էթիէնէն՝ Աւետարանիչ Ի. Աբրահամեան, եղբայր Յ. Գոնճօեան:

(*) Միութեան ժողովին տեղեկագրութիւնը յաջորդ-թիւով:

վիեննէն՝ Եղբայր Յ. Արրահամեան:

Փարիզէն՝ Վեր. Զ. Բ. Պուտաքեան, Աւետարանիչ Մ. Վէքիլեան, Եղբայր Ա. Միսիրեան:

Իբր Յիւր անդամ՝ Աւետարանիչ Ս. Պապալեան, Եղբայր Սարգիս Տէրտէրեան:

Ի սրտէ փառք կուտանք Աստուծոյ, որ բոլոր ժողովի ընթացքին մեզի շնորհեց Իր ներկայութիւնը և առաջնորդութիւնը: Ժողովականներն ալ իրենց լուրջ և խոհուն վարուելակերպով, միաբան և հոգեւոր հայեցողութեամբ մեծապէս սատարեցին ստեղծելու տաքուկ և սիրալիր մթնոլորտ մը: Միութեանս աշխատութիւնները կարելի է բաժնել երեք ղլխաւոր ճիւղերու:

Ա. Պաշտամունքներ.—

Համագումարին նպատակներէն մին ըլլալով, խորացնել ժողովականներուն ներքին կեանքը, ամէն օր ժամանակ տրուեցաւ Աղօթաժողովներու, որոնց ընդհանրապէս կ'առաջնորդէր Միութեանս սիրելի հիւրը Mr. Ehmann. Ժողովս բարեբաւարիկ առիթը ունեցաւ մի քանի օր վայելելու զայն և օգտուելու անոր հասուն փորձառութիւններէն և պատուական խորհուրդներէն: Մեր երէց Եղբայրը չորս անգամ խօսեցաւ մեզի, եկեղեցիին բնոյթին, անոր կանգուն պահուելուն, գործունէութեան և Սրբաբան մասին: Վեր. Ա. Փափազեան մէկ անգամ խօսեցաւ Քրիստոսի սպասւորներու մասին: Աղօթաժողովները շատ օրհնաբեր եղան, զի ամէն անգամ ունեցանք խոնարհեցման, գօրացումի և յառաջդիմութեան պահեր:

Իսկ գիշերները յատկացուեցան Աւետարանչական ժողովներու, թէ Լիօնի, թէ արուարձաններու մէջ: Ժողովուրդը հետաքրքրութեամբ հետեւեցաւ պատգամներուն, զորս Տէրը գործածեց ոմանց փրկութեան, և ոմանց հոգեւոր կեանքին վերահաստատման համար:

Բ. Տեղեկագիրներ.—

Մէն մի եկեղեցի ներկայացուց իր գրաւոր տեղեկագիրը: Ուրախալի էր նկատել որ անվրէպ ամէն տեղ կարելի էր նշմարել յառաջդիմութիւն և յաջողութիւն: Գոհացուցիչ էր նաև եկեղեցիներու նիւթական վիճակը:

Յատկապէս քննուեցաւ եկեղեցիներուն, հայերէն լեզուի դպրոցներու կարեւորութեան հարցը: Dr. Berron մանրակրկիտ հարցարան մը ղրկած էր բոլոր եկեղեցիներուն: Զանազան պատասխաններու լոյսին տակ, Բրօֆ. Խայրկեան և քարտուղարը, գործակցաբար պատրաստած

էին ընդհ. տեղեկագիր մը, զուգահեռաբար քննելով հայ լեզուի և Կիրականօրեայ դպրոցներու կարեւորութիւնն ու օգուտները: Բրօֆէսօրը բազմակողմանի խորհրդածութիւններով ներկայացուց դպրոցներուն կարեւոր դերերը, անոնց անհրաժեշտութիւնը մեր եկեղեցիներուն, վերջապէս անոնց օգուտկարութիւնը հոգեւոր, բարոյական և ազգային մարզերուն մէջ: Նկատուեցաւ որ 1938ին, մեր եկեղեցիներուն զանազան Կիրականօրեայ դպրոցներուն մէջ կը գտնուին 1050, իսկ հայերէն լեզուի դպրոցներուն մէջ 800 աշակերտ:

Եկեղեցիներու գործունէութիւնը A. C. O. ի բարեկամներուն լաւ ևս ծանօթացնելու, և զանոնք աւելի հետաքրքրելու համար որոշուեցաւ գօրացնել Levantի (Միսիոնարութեան թերթին) տեղեկագրութեան բաժինը: Աւետարանիչ Ի. Արրահամեան որոշուեցաւ իբր պատասխանատու թղթակից, որու խողովակով, եկեղեցիներու մասին յօդուած մը պիտի գրուի Levantի մէն մի թիւին մէջ:

Գ. Որոշումներ.—

Օրակարգի անցուած խնդիրները երկար եւ մանրամասն ուսումնասիրութեան առարկայ ըլլալով ստացան որոշ լուծումներ, ի մէջ այլոց տրուեցան հետեւեալ որոշումները:

1.— Որ քարտուղարին պատրաստած, Ֆրանսահայ Աւետ. եկեղեցիներու վերջի 15 տարիներու պատմութիւնը հրատարակուի յարմար առիթով մը: Գիրքը պիտի ծառայէ եկեղեցիները ծանօթացնելու արտասահմանի շրջանակներուն: Մինչ այն՝ իր վերջնական ձեւին բերել եկեղեցական կանոնագրութիւնը:

Միութեանս ուշադրութիւնը գրաւեց ընտանեկան յարկի վերաբերեալ յարակից խնդիրներ, որոնց համար տրուեցաւ հետեւեալ որոշումները:

2.— Ցարդ սովոր էինք քիչ բացառութեամբ կրօնական արարողութեամբ մը օրհնել նշանախօսութիւնները: Միութիւնս նկատելով որ երկու երիտասարդներու նշանախօսութիւնը լոկ ընտանեկան և անհատական բնոյթ կը կրէր, որոշեց որ խօսեցեալները, կամ անոնց ընտանիքները մտերմաբար ընտանեկան շրջանակին մէջ ընեն «խօսքկապը» առանց այդ առաջին քայլին տալու կրօնական կամ եկեղեցական գոյն մը և յետ այսու հովիւները չ'օրհնեն նշանախօսութիւնները: Ընտանիքներ կրնան իրենց յարմար սեպած ձեւով ծանուցանել և տօնել զայն: Իսկ եկեղեցին կը հետաքրքրուի ամուսնութեան պարագային,

կատարելով Պսակադրութեան արարողութիւնը յետ քաղաքական ամուսնութեան: Այս կերպով Միութիւնս որդեգրած եղաւ Ֆրանսայի այլ բարեկարգեալ եկեղեցիներու մէջմտը:

3.— Ուշագրութեան առարկայ եղաւ նաեւ խառն ամուսնութիւններու հարցը: Այսինքն թէ ի՞նչ պիտի ըլլար եկեղեցիին դիրքը երբ հոգեւոր մը կ'առաջադրէր ամուսնանալ անդարձի մը հետ: Յետ երկար խորհրդածութեան, մեծամասնութեան հաւանութեամբ որոշուեցաւ կիրարկել հետեւեալ բանաձեւը: «Միութիւնս, հաւատացեալներու նկատմամբ, իտէպլ և բնականոն կը սեպէ միայն երկու հաւատացեալներու ամուսնութիւնը»:

Կը ցաւի այն պարագաներուն, երբ հաւատացեալ մը անդարձի մը հետ կ'ուզէ կնքել ամուսնութիւն մը:

Առ այս կը յանձնարարէ հովիւներուն և հոգաբարձութեանց. ա. Շարունակել եկեղեցիները լուսաւորել այս մասին և յորդորել հաւատացեալները, ամէն գնով զգուշանալու այս քայլը առնելէ և երկուստեք յարաբերութիւնները դեռ չխորացած, յորդորել և Աստուծոյ խօսքով խրատել ետ կենալու այդ քայլէն: Բ. Չօրհնել խառն ամուսնութիւն մը, առանց նախապէս երէցին և Հոգաբարձական մարմնոյն կողմէ լրջօրէն զգուշացնելու ենթական, մատնանշելով հոգեւոր վտանգներն ու սպառնալի հաւանական ընտանեկան բարդ դժուարութիւնները:

Եկեղեցիները չեն փափաքիր տիրապետել որ և է մէկու վրայ, նոյն իսկ յանուն հոգեւոր սկզբունքներու: Այս խնդիր մ'է անհատական հաւատքի, լոյսի, խղճի, վերջապէս չէ թէ օրէնքի, այլ շնորհքի: Ամէն մարդ պարտի հաւատարիմ մնալ հոգեւոր սկզբունքներու, կամ պէտք է ստանձնէ իր առած մէկ սխալ քայլին հետեւանքներուն պատասխանատուութիւնը:

Հոգաբարձութիւնը իրաւասու է քննելու մէն մի պարագայ, հարկ եղած եկեղեցական կրթանքին ենթարկելու, եթէ եկեղեցւոյ անդամ մը կ'իյնայ այդ պարագային տակ: Այս խնդրոյն քննութեան մէջ նկատի առնուեցան թէ՛ Աստուծոյ խօսքը, թէ՛ ալ ուրիշ հոգեւոր եկեղեցիներու փորձառութիւնը, Մորավեան և այլ եղբայրութիւններու դիրքը եւլն.

4.— Քննուեցաւ ամուսնալուծման բարդ հարցը: Եկեղեցիները ի՞նչ պարագաներու տակ կրնան թուլատրել ամուսնալուծում մը և օրհնել քաժնուած ամուսնիներու նոր կապերը:

Իրաւ է որ ցարդ այսպիսի պարագաներ շատ

չենք ունեցած: Սակայն նկատելով որ համայնքներու մէջ այսպիսի բաներ կրնան պատահիլ, մանաւանդ նկատելով որ կառավարութիւնը փափաքած էր, որ մենք մեր սկզբունքները ներկայացնէինք առ այս, հարցը անցաւ օրակարգի:

Միութիւնս ընտրեց մասնաւոր յանձնախումբ մը որ իբր «Դատաստանական Խորհուրդ» պարտականութիւն ունենայ խորապէս քննելու այս կնճոռոտ հարցը, իր եզրակացութիւնները ներկայացնելու Միութեան: Որոշուեցաւ Executif Comitéի (Վերք. Ղազարոսեան, Պարսումեան, Բրօֆ. Խայիկեան) անդամներուն աւելցնել նաև Dr. Berron և Վերք. Փափագեան: Քարտուղարը արդէն նախնական աշխատութիւնները կատարած էր, յարաբերութեան մէջ մտնելով թէ տարբեր յարանուանութեանց, թէ ալ ուրիշ երկիրներ գտնուող հայ Աւետ. եկեղեցիներու հետ, իր ձեռքն ունենալով զանազան կանոններ, զորոնք Յանձնախումբին ներկայացուց իր տեղեկատուութիւնով միասին: Պատրաստուեցան առժամեայ կանոններ: Մինչեւ յառաջիկայ Միութիւն, Յանձնախումբը աւելի ընդարձակ կերպով պիտի քննէ այս խնդիրը վերջնական բանաձեւ մը տալու խնդրոյն: Դատաստանական Խորհուրդը յետ այսու մեր միջեւ բարձրագոյն հեղինակութիւնն է ամուսնալուծման խնդիրներու մէջ:

5. Executif Comité.— Աւետարանիչ Ս. Պապալեանի Միսիոնարական դաշտը երթալովը, ինչպէս նաեւ կարգ մը գործաւորներու տեղափոխուելու փափաքն ու դաշտերու վիճակը նկատի ունենալով, Միութիւնս հաղորդեց իր որոշումները գործակիցներու փոփոխութեանց համար:



ա.— Պ. Ս. Պապալեան St-Antoine-Marseille-էն Միջագետք կը մեկնի իբր Միսիոնարութ.— Paris-Alfortville-էն, Մ. Վէքիլեան կը յաջորդէ անոր:

գ.— Վերք. Պարսումեան, Լիօնէն կը փոխադրուի Ալֆօրվիլ:

դ.— Պ. Ա. Միսիոնար, որ արդէն Փարիզի հայ Աւետ. եկեղեցիին կը գործակցէր իբր ուսուցիչ, առանց իր բոլոր ժամանակը տալու, քիչ մը եւս կ'ընդարձակէ իր գործունէութիւնը, իբր օգնական Վերք. Զ. Պուտաքեանի:

ե.— Բրօֆ. Գ. Խայիկեան պիտի ձգէ Վալանսը և կը յաջորդէ Վերք. Պարսումեանի ի (Շարունակութիւնը տես՝ կողքին 4րդ էջը)

ՈՐՔԱՆ ՔԱՂՑՐ Է ԾԱՌԱՅԵԼ ՔԵՉ (ՍԱՄՈՒԷԼ Պ.)



- 1 Որքան քաղցր է ծառայել Քեզ
Պաշտելի Յիսուս,
Միշտ խանդավառ, միշտ սիրահէզ
Բոլոր օրերուն:

կրկ. Ձեռք տուր Յիսուս, օգնէ ինձի
Օ՛հ, տե՛ս, կ'արձարձի
Ծառայութեան տենչն իմ հոգւոյն
Հրդեհի մ'հանդոյն:

- 2 Քաղցր է Յիսուս, ո՛հ, շատ քաղցր
Միշտ Քեզ ծառայել,
Սրտով խոնարհ, հոգւով բարձր
Ձոհուիլ, միշտ զոհել:

կրկ. Ձեռք տուր...

- 3 Գործըդ մեծ է, դաշտը խիստ լայն,
Հողիք անհամար,
Դեռ անգիտակ մեծ փրկութեան
Կը մեռնին թշուառ:

կրկ. Ձեռք տուր...

- 4 Տէր, մէկ բանի ես կը՝ տենչամ
Ըլլալ սուրբ մըշակ
Կամ անձնուրաց, բոլորակամ
Ձիւնուր բոց, կըրակ:

կրկ. Ձեռք տուր...

- 5 Օրերն կ'անցնին, Տէր, կ'աղերսեմ.
Արգելքներն վերցուր,
Լըծէ զիս Բու գործիդ վըսեմ,
Ձիս սիրով լեցուր:

կրկ. Ձեռք տուր...

Լիօն: Իսկ Կալվին Պարսումեանի կը վիճակին Dècines & Pont de Cheruy.

զ.— Պ. Բ. Աբրահամեան, St-Etienneէն կ'անցնի վալանս, յաջորդելու Բրոֆէսորին:

է.— Vienne կը կցուի Լիօնի:

Յայտնի է թէ այսքան բազմաթիւ փոփոխութիւններ չէին կրնար չյարուցանել կնճոտ հարցեր: Ո՛չ Executif Comitéի, ո՛չ ալ Միութեանս համար դիւրին էր տալ նմանօրինակ որոշումներ և ստանձնել նոր ծախքեր:

Դիւրին չէր նաև վիշտ պատճառել զանազան համայնքներու, որոնք պէտք է յիշել, շատ յարած էին իրենց հովիւներուն և բնաւ յօժար չէին ընդունիլ անոնց տեղափոխութիւնը: Նկատի առնուեցաւ սակայն զործին ընդհանուր շահերը, զործակիցներու տեսակէտներն ու զաշտերուն պահանջները: Որոշումները տրուեցան, վստահելով Աստուածային առաջնորդութեան, իմաստութիւնով և իրատես մտքով:

Երկրիս վրայ ճնշող, քաղաքական ահաւոր կացութիւնը, ցարդ արդեւ եղաւ որ իրականացուին այս որոշումները, սակայն սկզբունքով բնաւ չէ փոխուած:

6.— Այլ խնդիրներ զտան իրենց լուծումները, ըլլայ Միութեանս, ըլլայ Executif Comitéի նիստերուն մէջ:

Համագումարս վերջացաւ, օրհնեալ պաշտամունքով մը, Տէրունական ընթրիքով:

Շնորհէ՛ Աստուած, որ այդ օրերու հաւաքական զործակցութեան հետեւանքները, կազդուրիչ շաղի մը պէս իջնեն մեր միջեւ եղած Աստուծոյ զործին վրայ, նաև այն բոլոր շրջանակներուն միջեւ, որոնց ծառայելու կանչուած են Ֆրանսահայ Աւետ. եկեղեցիները:

Զ. Բ. ՊՈԻՏԱՔԵԱՆ

Քարտուղար

Միութեան ժողովին

■

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԾԱՆՈՒՅՈՒՄՆԵՐ

« ԲԱՆԲԵՐ » Ի ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒՆ

Եթէ Տէրը կամի յառաջիկայ թուով «Բանբեր»ի Ժ. տարեշրջանը պիտի լինայ և Յունուարին ԺԵ.ը պիտի մտնենք: Այն դիտութիւնը թէ «Բանբեր» իր զացած տեղերուն մէջ օրհնութիւն եղաւ, մեզ մոտցնել տուաւ տարուան բոլոր յոգնութիւնները: Չեր նամակները այս տեսակէտով զմեզ խիստ քաջալերեցին աւելի ուրախութեամբ դիմագրաւելու խմբագրական և հրատարակչական բոլոր տաղանդները:

Նոր տարին սկսելէ առաջ Ձեզի առաջարկ մը ունինք, որ հոգիներու սիրովը շաղուած աղաչանք մըն է: Քանի որ արդէն աշխատութիւնը նոյնն է և միայն պզտիկ յոգնութեան մը կը կարօտինք մենք «Բանբեր»ը աւելի շրջանակներու օգտակար ընելու, մեր ձեռքէն եկածը կ'ուզենք ընել, այն ակնկալութեամբ որ «Բանբեր»ի իւրաքանչիւր բնութեցող ալ իր ձեռքէն եկածն ընէ մէկ կամ երկու նոր բաժանորդներ զտնելով:

Կարելի՞ է որ «Բանբեր»ի բաժանորդներուն թիւը կրկնապատկուի յառաջիկայ տարին: Մենք կ'ըսենք այո՛ և կ'սպասենք: Խմբագրութիւնս զիտէ այս մասին իրեն աջակցող անձը յարմար նուէրով մը վարձատրել՝ պատի մեծադիր Ս. Գրական համարով մը, Ս. գրական մեծադիր պատկերով մը կամ մեր հրատարակած գրքերէն մէկովը: Երկու նոր բաժանորդ զտնողի մը պիտի զրկենք մէկ օրինակ «Մատու Սունտար Սինկհ»էն կամ «Պուրկատօրֆի Երիցատան Յաղթանակ»էն: Հինգ նոր բաժանորդներ զտնողի մը մէկ տարեկան «Բանբեր» ձրի պիտի զրկենք, (այս պայմանը մանաւանդ վճարելու անկարողներու և պատանիներուն համար է ի քաջալերութիւն անոնց): Մեր ներքին զգացումներուն հակառակ կուզայ այս կերպ փրօփականտը, բայց տեսանք թէ կան անձեր, նոյնպէս պատանիներ, որոնք բարի զործի մը մէջ աւելի դիւրաւ կը նետուին իրենց աշխատութեան գործնական յիշատակ մը պահելու զգացումով: Իրենց այս փափաքին մենք ընդառաջ կ'երթանք:

Տ ԿԱՐԵԻՈՐ.— Գերմանիայէն թանթէ Կատալինէի բարեկամներէն կը խնդրուի մեզ հետեւալ ծանուցումն ընել.—

Մեզրէի նախկին գերման որբանոցի մայրիկ թանթէ Կատարինէի աղջիկները, որոնք ցրուած են սփիւռքի մէջ, գեղեցիկ խորհուրդն ունեցած են առ ի երախտագիտութիւն, դամբան մը բարձրացնել անոր գերեզմանին վրայ: Առ այս անոնք մեզի առաջարկներ ըրած են և կը խնդրեն որ Ձեր նամակները այս խնդրոյ առթիւ խմբագրութեանս գրէք:

Ուրեմն անոնք որ այս մասին խորհած են, կամ զրամ հաւաքած են, թող հաճին մեզի տեղեկացնել, որպէսզի մեզմէ ընդունին իրենց հրահանգները: Կը խնդրուի «Բանբեր»ի ընթերցողներէն, լուր տալ այսպիսիներու:

Շնորհակալութիւններով, Ձերդ

Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ

Le Gérant : H. N. GHAZAROSSIAN

Imp. Y. ARMEN & Cie 39 Rue St - Savournin Marseille